

ՁԵՌՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՍՈՒՐԻԱԳԱՅԵՐՈՒ ՀԱՄԱՐԿՄԱՆ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ

Մշակուած եւ հրատարակուած է Եւրոպական միութեան ֆինանսաւորմամբ՝ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութեան պատուերով, Կարիտաս Լիբանանի եւ Կարիտաս Աւստրիայի (ծրագիր 1660028) համագործակցութեամբ իրականացուող «Ճանչնալ: Պաշտպանել: Իրագործել:» ծրագրի (NEAR-TS/2016/376-938) ծիրէն ներս:



**ՁԵՌՆԱՐԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ՀԱՄԱՐԿՄԱՆ
ՈՒՂՂՈՐԴՄԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2020

Ծրագրի հապաւումը	RPR
Դրամաշնորհային համաձայնագրի թիւը	NEAR-TS/2016/376-938
Կարիտաս Աւստրիոյ ծրագրի թիւը	1660028
Յայկական Կարիտասի ծրագրի թիւը	239
Ծրագրի անուանումը	«Ճանչնալ: Պաշտպանել: Իրագործել». աջակցութիւն Լիբանանի եւ Յայաստանի գաղթեալներուն եւ ապաստան հայցողներու իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ սուրիահայ փախստականներու՝ Լիբանանէն Յայաստան անվտանգ տեղափոխման
Ծրագիրը իրականացնող խումբը	Կարիտաս Աւստրիա (ծրագրի ղեկավար կառոյց) Յայկական Կարիտաս Կարիտաս Լիբանան
Ձեռնարկը կազմող խումբը	ADVISE CONSULTING պիզնես եւ իրաւաբանական խորհրդատուական ընկերութիւն

Նշում

Այս հրապարակումը պատրաստուած է Եւրոպական միութեան աջակցութեամբ: Յրապարակման բովանդակութեան համար պատասխանատուութիւն կը կրեն «Ճանչնալ: Պաշտպանել: Իրագործել:» ծրագիրը՝ «Յայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութիւնը, Կարիտաս Լիբանանի եւ Կարիտաս Աւստրիայի հետ համագործակցութեամբ, եւ ADVISE պիզնես եւ իրաւաբանական խորհրդատուական ընկերութիւնը: Սոյն հրապարակումը որեւէ ձեւով չ'արտայայտեր Եւրոպական միութեան տեսակետները:

Բնօրինակութեան նշում

Սոյն հրապարակումը կը ներառէ չտպագրուած բնօրինակ աշխատանք՝ բացառութեամբ այն հատուածներուն, ուր յստակ կերպով առկայ է յիշատակում: Նախապէս տպագրուած նիւթերը եւ այլ հեղինակներու աշխատութիւնները նշուած են համապատասխան մէջբերումներու եւ յղումներու տեսքով:

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներուն աշխարհաքաղաքական զարգացումներուն հետեւանքով նկատելիօրէն աւելցած է տեղահանուած անձերու թիւը աշխարհի տարբեր երկրներու մէջ: 2011 թուականէն Սուրիոյ մէջ ընթացող հակամարտութիւններու հետեւանքով Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխուած է աւելի քան 22 000 անձ՝ գլխաւորաբար ազգութեամբ հայեր: Տարբեր տուեալներով՝ սուրիահայերու մէկ մասը վերադարձած է Սուրիա կամ տեղափոխուած երրորդ երկիր, 14-15 հազարը ներկայիս կը շարունակէ բնակիլ Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Դեռ 2012 թուականին՝ սուրիահայերու զանգուածային ներհոսքի ժամանակ, ակնյայտ դարձաւ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ կը բացակային մեծաթիւ տեղահանուած անձեր ընդունելու համար անհրաժեշտ ենթակառուցածքներն ու հնարաւորութիւնները: Այնուհանդերձ՝ ՀՀ կառավարութեան, միջազգային եւ համահայկական կառոյցներու, ինչպէս նաեւ տեղական հասարակական կազմակերպութիւններու համախմբուած ջանքերով Հայաստան տեղափոխուած Սուրիոյ քաղաքացիներուն տրամադրուեցաւ բազմակողմանի աջակցութիւն, ստեղծուեցան նախադրեալներ՝ Հայաստանի մէջ համարկուելու համար:

Իւրաքանչիւր երկրի մէջ համարկման գործընթացին անձը կ'անցնի որոշ փուլերով՝ բախուելով եւ յաղթահարելով նոյնանման խնդիրներ ու մարտահրաւերներ: Հաշուի առնելով Հայկական Կարիտասի բազմամեայ գործունեութիւնն ու տասնամեակներու փորձը՝ կրնանք արձանագրել, որ անձի համարկման երաշխիքներէն է նաեւ տուեալ երկրի օրէնքներու, ինչպէս նաեւ սեփական իրաւունքներու ու պարտականութիւններուն իրազեկ ըլլալը:

Իրազեկուած անձը ի զօրու է պաշտպանելու իր եւ իր մերձաւորներու իրաւունքները՝ միեւնոյն ժամանակ յարգելով բնակութեան երկրի օրէնքներն ու բարեխղճօրէն կատարելով իր պարտականութիւնները տուեալ երկրի հանդէպ:

«Ճանչնալ: Պաշտպանել: Իրագործել:» ծրագրի ծիրէն ներս մշակուած՝ «Հայաստանի մէջ սուրիահայերու համարկման ուղղորդման ձեռնարկի» թիրախային խումբը սուրիահայերն են, այնուհանդերձ, անկկա կրնայ օգտակար ըլլալ Հայաստան տեղափոխուած եւ բնակութիւն հաստատած իւրաքանչիւր անձի համար, քանի որ կ'ընդգրկէ անձի կենսագործունեութեան գրեթէ բոլոր ոլորտները՝ երկիր մուտք գործելու պահէն մինչեւ կրթութիւն ստանալու եւ գործարարութեամբ զբաղելու հնարաւորութիւնները: Ձեռնարկին մէջ դուք կրնաք գտնել յաճախ տրուող հարցերու շուրջ թե՛ իրաւական կարգաւորումները եւ թե՛ կիրարկումը:



Ձեռնարկի նպատակն է նպաստել Հայաստան տեղափոխուած անձերուն՝ առանց խոչընդոտներու, սահուն եւ կայուն համարկման՝ սեփական իրաւունքներու եւ պարտականութիւններու, ինչպէս նաեւ տարբեր ոլորտներէն ներս առկայ հնարաւորութիւններու վերաբերեալ իրազեկուածութեան բարձրացման միջոցով:

Այս ձեռնարկը մշակուած է ADWISE Business եւ իրաւաբանական խորհրդատուական ընկերութեան կողմէն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետութեան 2018-2019 թուականներու իրաւական հիմքի ուսումնասիրութիւնը: Անկա մասամբ վերանուանուած է՝ հիմնուելով երկրի մէջ 2019 թուականին իրականացուած օրենսդրական բարեփոխումները: Անկա կազմուած եւ ձեւաւորուած է ընթերցողի համար առաւել մատչելի ձեւակերպումներով եւ տեսքով:

Ձեռնարկը կազմելու գործին մէջ ցուցաբերած անգնահատելի աջակցութեան եւ արդիւնաւետ համագործակցութեան համար յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք հետեւեալ կառոյցներուն.

1. ՀՀ առողջապահութեան նախարարութիւն
2. ՀՀ արդարադատութեան նախարարութիւն
3. ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն
4. ՀՀ պաշտպանութեան նախարարութիւն
5. ՀՀ սփիւռքի նախարարութիւն
6. ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութիւն
7. ՀՀ ոստիկանություն (մասնաւորապէս՝ Անձնագրային եւ վիզաներու վարչութեան, «Ճանապարհային ոստիկանութիւն» ծառայութեան)
8. ՀՀ պետական եկամուտներու կոմիտէ
9. ՀՀ ՏԿՁՆ Միգրացիոն ծառայութիւն
10. ՀՀ ԱՍՀՆ Չբաղուածութեան պետական գործակալութիւն
11. ՀՀ անշարժ գոյքի քատասդրի կոմիտէ
12. Հայաստանի կեդրոնական պանք
13. ՀՀ փաստաբաններու պալատ
14. ՄԱԿ ՓԳՀ

Լիայոյս ենք, որ «Հայաստանի մէջ սուրիահայերու համարկման ուղղորդման ձեռնարկի» միջոցով կը գտնէք ձեզ հետաքրքրող եւ յուզող հարցերու պատասխանները եւ առաւել ամուր թելերով կը կապուիք Հայաստանին՝ այստեղ ստեղծելով նոր՝ արելի լաւ ու լուսաւոր ապագայ ձեզի եւ ձեր սերունդներուն համար, ձեր լուման ունենալով մեր Հայրենիքի հզօրացման ու բարգաւաճման գործին մէջ:

Յարգանքով՝

«Հայկական Կարիտաս»

բարեսիրական հասարակական կազմակերպություն

«Ճանչնալ: Պաշտպանել: Իրագործել:» ծրագիրը (2017-2019) կը ֆինանսավորուի Եւրոպական միութեան կողմէն: Չայն կը համակարգէ Կարիտաս Աւստրիան, կ'իրականացնեն Հայկական Կարիտասն ու Կարիտաս Լիբանանը: Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել գաղթեալներուն, ապաստան հայցողներուն, փախստականներուն եւ փախստականի իրավիճակի մէջ յայտնուած անձերու պաշտպանութեան Հայաստանի եւ Լիբանանի մէջ՝ պաշտպանելով, յարգելով եւ խթանելով մարդու իրաւունքները:

Բովանդակության ցանկ

1. Հայաստան մուտքն ու կեցութիւնը _____	10
1.1. Մուտքը Հայաստանի Հանրապետութիւն _____	10
1.2. Մուտքի վիզա _____	10
1.3. ՀՀ քաղաքացիութեան, կացութեան կարգավիճակի ու փախստականի կարգավիճակի հիմնական տարբերութիւնները _____	11
1.4. ՀՀ քաղաքացիութեան ձեռքբերում _____	14
1.4.1. Ո՞վ կրնայ դիմել ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար _____	14
1.4.2. Ո՞վ կը շնորհէ ՀՀ քաղաքացիութիւն _____	14
1.4.3. Ի՞նչպէս ստանալ ՀՀ քաղաքացիութիւն _____	14
1.4.3.1. Ո՞ր դիմել _____	14
1.4.3.2. Ի՞նչ փաստաթուղթեր է անհրաժեշտ ներկայացնել _____	15
1.4.3.3. Ի՞նչ լրացուցիչ պայմաններ են առկայ _____	16
1.4.3.4. Ի՞նչ ժամկետի մեջ կը շնորհուի քաղաքացիութիւնը _____	16
1.4.3.5. Ե՞րբ կը մերժուի դիմումը _____	16
1.4.3.6. Անձնագրի տրամադրում _____	17
1.4.4. Ո՞ր պարագաներուն երեխան ձեռք կը բերէ ՀՀ քաղաքացիութիւն _____	18
1.5. Մշտական կամ յատուկ կացութեան կարգավիճակ _____	18
1.5.1. Որո՞նք են մշտական եւ յատուկ կացութեան կարգավիճակները _____	18
1.5.2. Ո՞ր դիմել կացութեան կարգավիճակ ստանալու համար _____	19
1.5.3. Ո՞վ կրնայ դիմել մշտական եւ յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու համար _____	19
1.5.4. Ի՞նչպէս ստանալ մշտական կացութեան կարգավիճակ _____	20
1.5.5. Ինչպէ՞ս ստանալ յատուկ կացութեան կարգավիճակ _____	21
1.6. Փախստականի կարգավիճակի ստացում _____	22
1.6.1. Ո՞վ կը համարուի փախստական _____	22
1.6.2. Որո՞նք չի տրամադրուի փախստականի կարգավիճակ _____	22
1.6.3. Ինչպէ՞ս ստանալ փախստականի կարգավիճակ _____	22
1.6.4. Ի՞նչ արտօնութիւններէն կ'օգտուի փախստականը _____	23
1.7. ՀՀ բնակչութեան պետական արձանագրատան կողմէն հաշուառում _____	24
1.8. Հանրային ծառայութիւններու համարանիշի ստացում _____	25
1.9. Վարորդական վկայականի ձեռքբերում _____	25
1.10. Երկքաղաքացիութիւն _____	26
2. Աշխատանքը Հայաստանի մէջ _____	26
3. Ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք _____	28
4. Չինապարտութիւն եւ զինուորական ծառայութիւն _____	29
4.1. Ո՞ր դէպքերուն է հնարաւոր ստանալ տարեկետում _____	29
4.1.1. Որո՞նք են առողջական վիճակով պայմանաւորուած տարեկետման հիմքերն ու կարգը _____	29

4.1.2. Ո՞րոնք են ընտանեկան վիճակով պայմանաւորուած տարեկէտման հիմքերն ու կարգը	29
4.1.3. Ո՞րոնք են ուսումնական հաստատութենէն ներս ուսանելով պայմանաւորուած տարեկէտման հիմքերն ու կարգը	30
4.2. Ո՞ր դէպքերուն է հնարաւոր ազատիլ պարտադիր ծառայութեան պարտաւորութենէն	31
5. Առողջապահութիւն: Բժշկական օգնութիւն եւ սպասարկում	31
6. Հաշմանդամութեան վերաբերեալ հարցեր	34
6.1. Ո՞վ կը համարուի հաշմանդամ Հայաստանի մէջ	34
6.2. Ինչպէ՞ս ստանալ հաշմանդամութեան կարգ	35
6.3. Ի՞նչ երաշխիքներ կը տրամադրուին հաշմանդամութեան պարագային	36
6.4. Ինչպէ՞ս կ'իրականացուի տարեց եւ/կամ հաշմանդամութիւն ունեցող անձերու խնամքը	37
7. Պետական նպաստներ	37
7.1. Ի՞նչ պետական նպաստներ են հասանելի սուրիահայերուն	37
7.1.1. Ո՞վ ունի ընտանեկան նպաստի իրաւունք	37
7.1.2. Ո՞վ ունի սոցիալական նպաստի իրաւունք	38
7.1.3. Ո՞վ ունի հրատապ օգնութեան իրաւունք	38
7.1.4. Ո՞վ ունի երեխայի ծննդեան միանուագ նպաստի իրաւունք	38
7.1.5. Ո՞վ ունի մայրութեան նպաստի իրաւունք	38
7.1.6. Ո՞վ ունի մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրաւունք	39
7.1.7. Ո՞վ ունի ժամանակաւոր անաշխատունակութեան նպաստի իրաւունք	39
7.1.8. Ո՞վ ունի ծերութեան եւ հաշմանդամութեան նպաստի իրաւունք	39
7.1.9. Ո՞վ ունի կերակրող կորսնցնելու պարագայի նպաստի իրաւունք	39
7.1.10. Ո՞վ ունի թաղման նպաստի իրաւունք	40
8. Զաղաքացիական կացութեան գործերու գրանցում	40
8.1. Ինչպէ՞ս գրանցել երեխայի ծնունդը	40
8.2. Ինչպէ՞ս գրանցել ամուսնութիւնը	41
8.3. Ինչպէ՞ս կը կատարուի մահուան պետական գրանցումը	42
8.4. Ինչպէ՞ս գրանցել անուան փոփոխումը	42
9. Անշարժ գոյքը եւ անոր նկատմամբ իրաւունքի պետական գրանցումը	43
9.1. Ի՞նչ է անշարժ գոյքը	43
9.2. Որո՞նք են անշարժ գոյքի ձեռքբերման հետ կապուած վտանգները	44
9.3. Որո՞նք են անշարժ գոյքի առքուվաճառքի փուլերը	45
10. Կրթութիւն	46
10.1. Նախակրթական հաստատութիւններ (մանկապարտեզ)	46
10.2. Դպրոց	47
10.3. Բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ (ԲՈՒՀ-եր)	49
11. Ձեռնարկատիրական գործունեութեամբ զբաղելու ձեւերը եւ անոնց առանձնայատկութիւնները	50

11.1. Ի՞նչ է պետք իմանալ նոր պիզնետ սկսելէն առաջ _____	50
11.2. Ինչպէ՞ս հաշուառուիլ որպէս անհատ ձեռնարկատեր _____	50
11.3. Իրաւաբանական անձ ստեղծելու միջոցով պիզնետի իրականացում _____	51
11.3.1. Ինչպէ՞ս գրանցել իրաւաբանական անձ _____	51
11.3.2. Որո՞նք են իրաւաբանական անձերու հիմնական տեսակները _____	52
11.3.2.1. Ի՞նչ է գործակցութիւնը _____	53
11.3.2.2. Ի՞նչ է լիակատար ընկերակցութիւնը _____	53
11.3.2.3. Ի՞նչ է վստահութեան վրայ հիմնուած ընկերակցութիւնը _____	53
11.3.2.4. Ի՞նչ է սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութիւնը _____	54
11.3.2.5. Ի՞նչ է լրացուցիչ պատասխանատուութեամբ ընկերութիւնը _____	54
11.3.2.6. Ի՞նչ է բաժնետիրական ընկերութիւնը _____	54
11.4. Որո՞նք են ՍՊԸ-ի ու ՓԲԸ-ի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները _____	55
11.5. Իրաւաբանական անձի վերակազմակերպում _____	58
11.5.1. Ի՞նչ է իրաւաբանական անձի վերակազմակերպումը _____	58
11.5.2. Ի՞նչ կարգով կ'իրականացուի իրաւաբանական անձի վերակազմակերպումը _____	58
11.5.3. Որո՞նք են վերակազմակերպման ձեւերը _____	58
11.5.3.1. Ի՞նչ է միաձուլումը _____	58
11.5.3.2. Ի՞նչ է բաժանումը _____	59
11.5.3.3. Ի՞նչ է միացումը _____	59
11.5.3.4. Ի՞նչ է առանձնացումը _____	59
11.5.3.5. Ի՞նչ է վերակազմաւորումը _____	59
11.5.4. Ի՞նչ ընթացակարգով կ'իրականացուի վերակազմակերպումը _____	60
12. Զարկումը Հայաստանի Հանրապետութեան մէջ _____	61
12.1. Զարկման ինչպիսի՞ համակարգեր կան Հայաստանի մէջ _____	61
12.2. Որո՞նք են պիզնետի կողմէն վճարուող հարկերը _____	61
12.2.1. Աւելցուած արժէքի հարկ (ԱԱՀ) _____	61
12.2.2. Շահութահարկ _____	62
12.2.3. Մաքսային հարկ _____	62
12.2.4. Շրջանառութեան հարկ _____	62
12.2.5. Արտօնագրային հարկ _____	63
12.3. Որո՞նք են պիզնետի ու անհատներու կողմէն վճարուող հարկերը _____	64
12.3.1. Եկամտային հարկ _____	64
12.3.2. Անշարժ գոյքի հարկ _____	65
12.3.3. Փոխադրամիջոցներու գոյքահարկ _____	65
12.4. Ինչպիսի՞ հարկային արտօնութիւններ կը գործեն Հայաստանի մէջ _____	65
13. Փոքր եւ միջին ձեռնարկատիրութիւններու (ՓՄՁ) համար հարկային արտօնութիւններու հնարաւորութիւններ _____	66
13.1. Միկրոձեռնարկատիրութիւն _____	66

13.1.1. Ի՞նչ հարկային արտոնություններ կը տրուին միկրոձեռնարկատիրություններուն _____	66
13.1.2. Այլ առաւելություններ _____	67
13.1.3. Ո՞վ կրնայ ըլլալ ընտանեկան միկրոձեռնարկատիրութեան տեր _____	67
13.1.4. Ովքե՞ր չեն կրնար համարուիլ միկրոձեռնարկատիրութեան տերեր _____	67
13.1.5. Գործունեութեան ո՞ր տեսակներու համար է սահմանուած հարկային արտոնութիւն _____	69
13.1.6. Ինչպէ՞ս ստանալ հարկային արտոնութիւնը _____	70
13.1.7. Ի՞նչ պէտք է յիշել դիմումը լրացնելու ժամանակ _____	70
13.2. Ինքնագրադ անձինք _____	71
13.2.1. Ի՞նչ հարկային արտոնութիւն կը տրուի ինքնագրադ անձին _____	71
13.2.2. Ո՞վ է ինքնագրադ անձը _____	71
13.2.3. Գործունեութեան ո՞ր տեսակներու համար է սահմանուած հարկային արտոնութիւն _____	72
13.2.4. Ինչպէ՞ս ստանալ հարկային արտոնութիւն _____	73
13.2.5. Ի՞նչ է պէտք յիշել դիմումը լրացնելու ժամանակ _____	73
14. Մաքսային արտոնութիւններ _____	74
14.1. ՀՀ մշտական բնակութեան ժամանոց ֆիզիքական անձերու անձնական գոյքի ներմուծում _____	74
14.1.1. Ի՞նչ արտոնութիւն կը տրամադրուի _____	74
14.1.2. Ո՞վ կ'օգտուի արտոնութենէն _____	74
14.1.3. Ինչպէ՞ս օգտուիլ արտոնութենէն _____	75
14.2. Այլ մաքսային արտոնութիւններ _____	75
15. Սնանկութիւնն ու անոր առանձնայատկութիւնները _____	76
15.1. Ո՞վ կրնայ ճանչցուիլ սնանկ եւ որո՞ւն կողմէն _____	76
15.2. Որո՞նք են սնանկութեան տեսակները _____	76
15.2.1. Ո՞ր սնանկութիւնն է հարկադրուած _____	76
15.2.2. Ո՞ր սնանկութիւնն է կամաւոր _____	76
15.2.3. Ո՞ր սնանկութիւնն է կանխատեսուող _____	76
15.2.4. Ո՞ր սնանկութիւնն է կանխամտածուած _____	77
15.3. Ե՞րբ կը ներկայացուին պարտատերերու պահանջները _____	77
15.4. Ի՞նչ հերթականութեամբ կը բաւարարուին պարտատերերու պահանջները _____	77
15.5. Որո՞նք են սնանկ ճանչցուելու հետեւանքները _____	78
15.6. Որքա՞ն է սնանկութեան գործերով վարոյթներու ժամկետը _____	79
16. Ֆինանսական ծառայութիւններու հասանելիութիւնը _____	79



1. Հայաստան մուտքն ու կեցութիւնը

1.1. Մուտքը Հայաստանի Հանրապետութիւն

Անձը կրնայ Հայաստան մուտք գործել, եթէ՝

- ունի ՀՀ քաղաքացիութիւն
- ունի Հայաստանի մէջ կացութեան կարգավիճակ
- ստացած է մուտքի արտօնագիր (վիզա)
- սահմանին կը հայցէ ապաստան
- ՀՀ-ի մէջ ստացած է փախստականի կարգավիճակ:

1.2. Մուտքի վիզա

Վիզան հնարաւորութիւն կու տայ Հայաստանի մէջ գտնուիլ ոչ ավելի, քան 180 օր:

Սուրիահայերը, ինչպէս նաեւ այլ պետութիւններու հայ քաղաքացիները կրնան ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա սահմանի վրայ, եթէ ունին իրենց ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթեր (ցանկը տես ստորեւ՝ «Ի՞նչ փաստաթուղթեր է անհրաժեշտ ներկայացնել քաղաքացիութիւն հայցելու ժամանակ»):

Սուրիահայերը կ'ազատին վիզաներու համար բոլոր տեսակի վճարումներէն¹: Սուրիոյ ոչ հայ քաղաքացիները մուտքի վիզան կրնան ստանալ որեւէ երկրի մէջ Հայաստանի դիւանագիտական կառոյցներու, օրինակ՝ Սուրիոյ մէջ ՀՀ դեսպանատունէն եւ Հալէպի մէջ ՀՀ հիւպատոսարանէն: Մուտքի վիզա ստանալու համար պարտադիր է հրաւերի ամկայութիւնը եւ վիզայի համար պետական տուրքի վճարումը:

¹«Պետական տուրքի մասին» ՀՀ օրէնքի 26-րդ յօդուած


1.3. ՀՀ քաղաքացիության, կացության կարգավիճակի ու փախստական կարգավիճակի հիմնական տարբերությունները



1.3. ՀՀ քաղաքացիության, կացության կարգավիճակի ու փախստականի կարգավիճակի հիմնական տարբերությունները



1.3. ՀՀ քաղաքացիության, կացության կարգավիճակի ու փախստական կարգավիճակի հիմնական տարբերությունները



1.4.33 քաղաքացիության ձեռքբերում

1.4.1. Ո՞վ կրնայ դիմել 33 քաղաքացիություն ստանալու համար

Ազգությամբ հայը կրնայ 33 քաղաքացիություն ձեռք բերել առանց որեւէ եական սախապայմանի՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթուղթերը:

Անձինք, ովքեր ազգությամբ հայ չեն, բայց վերջին 2 տարին **ամուսնացած են 33 քաղաքացիի հետ** եւ այդ տարիներու ընթացքին առնուազն 365 օր գտնուած են 33-ի մէջ կամ **ունին 33 քաղաքացի երեխայ**, կրնան ձեռք բերել 33 քաղաքացիություն՝ յանձնելով 33 Սահմանադրութեան իմացութեան քննութիւն:

1.4.2. Ո՞վ կը շնորհէ 33 քաղաքացիութիւն

33 քաղաքացիութիւն կը շնորհէ 33 Նախագահը:

1.4.3. Ինչպէ՞ս ստանալ 33 քաղաքացիութիւն

1.4.3.1. Ո՞ր դիմել


Եթէ 33 քաղաքացիութիւն հայցող անձը կը **գտնուի 33-ի մէջ**, ապա փաստաթուղթերը կը ներկայացնէ 33 ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութիւն (յետայսու՝ **Վարչութիւն**):

Եթէ 33 քաղաքացիութիւն հայցող անձը կը **գտնուի 3այաստանի 3անրապետութենէն դուրս**, ապա փաստաթուղթերը կը ներկայացնէ համապատասխան երկրի մէջ գործող 3այաստանի 3անրապետութեան դեսպանութիւն կամ հիւպատոսական հիմնարկ:



1.4.3.2. Ի՞նչ փաստաթուղթեր են անհրաժեշտ ներկայացնել

Վարչութեան պետք է ներկայացնել հետևեալ փաստաթուղթերը՝



*Անձնագրի փոխարեն կարելի է ներկայացնել փախստականի ճամբորդական փաստաթուղթը:
**Որեւէ օտարալեզու փաստաթուղթ կը ներկայացուի անոր նօտարական կարգով վաւերացուած հայերէն թարգմանութեան հետ միասին:

Ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթ կը համարուի՝

- Մկրտութեան մասին փաստաթուղթը՝ տրուած կողմէն այն եկեղեցւոյ, որ կը գտնուի հաստատուած ցանկին մէջ² (եւ հաստատուած է դէսպանութեան կամ հիւպատոսարանի կողմէն)։
- Օտարերկրեայ պետութեան կողմէն տրուած ու երաշխաւորուած կամ հիւպատոսական հաստատմամբ փաստաթուղթ, որ կը հաստատէ ազգութեամբ հայ ըլլալը։
- Ազգութեամբ հայ ծնողի (մեծ հօր, մեծ մօր, հարազատ քրոջ կամ եղբօր) ծննդեան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ՝ հիմնաւորելով ազգակցական կապը։
- Ազգութիւնը հիմնաւորող այլ հաստատուած փաստաթուղթ։

²(ա) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - Դամասկոսի Հայոց թեմ, Սուրիա Դամասկոս
(բ) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն - Հալեպի թեմ եւ Ճեզիրէի թեմ, Հալեպ, Սուրիա, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, Լիբանան, Լիբանանի թեմ, Պէյրութ, Լիբանան
(գ) Հայ Կաթողիկէ Եկեղեցի - Բերիոյ թեմ, Հալեպ Սուրիա, Դամասկոս թեմ, Դամասկոս Սուրիա, Գամիշլիի թեմ, Գամիշլի, Սուրիա, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Եկեղեցի, Չմմառ, Պէյրութ, Լիբանան
(դ) Հայ Աւետարանական Եկեղեցի - Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Պէյրութ, Լիբանան

ՀՀ քաղաքացի կին, ամուսին կամ երեխայ ունենալը հաստատող փաստաթուղթ կը համարուի՝

- Ամուսնության վկայականը եւ անոր պատճենը.
- Ամուսինի անձնագիրը եւ անոր պատճենը կամ տեղեկանք ամուսինի քաղաքացիության մասին.
- Իր երեխայի ծննդեան վկայականը եւ անոր պատճենը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւնը հաստատող վկայականը եւ անոր պատճենը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիի անձնագիրը եւ անոր պատճենը:

1.4.3.3. Ի՞նչ լրացուցիչ պայմաններ են առկայ

Դիմումը եւ փաստաթուղթերը պետք է **անձամբ** ներկայացնել Վարչութիւն կամ դեսպանութիւն/հիւպատոսարան եւ տեղւոյն վրայ **լրացնել տրամադրուած հարցաթերթիկը՝** հայերէնով:

Հարկ եղած պարագային դիմողը պետք է ՀՀ Սահմանադրութեան իմացութեան ստուգման համար նշանակուած օրը ներկայանայ եւ յանձնէ քննութիւնը:

1.4.3.4. Ի՞նչ ժամկետի մէջ կը շնորհուի քաղաքացիութիւնը

Դիմումը կը քննուի ներկայացուելէն ետք 6 ամսուան ընթացքին:

1.4.3.5. Ե՞րբ կը մերժուի դիմումը

Դիմումը կը մերժուի, եթէ անձը իր գործունեութեամբ կը վնասէ պետական եւ հասարակական անվտանգութիւնը, հասարակական կարգին, հանրութեան առողջութեան եւ բարքերուն, այլոց իրաւունքներուն եւ ազատութիւններուն, պատուին եւ բարի համբաւին:

Դիմումի մերժումը կրնայ չհիմնաւորուիլ:

Դիմումը մերժուելու պարագային անձը իրաւունք ունի մերժման օրուրէ մէկ տարի ետք կրկին դիմել քաղաքացիութիւն ստանալու համար, սակայն մերժումը բողոքարկման ենթակայ չէ:

1.4.3.6. Անձնագրի տրամադրում

Քաղաքացիություն ստանալն ետք պետք է ստանալ **անձնագիր**: Անոր համար պետք է դիմել Վարչություն: Անհրաժեշտ է ներկայացնել՝



ՀՀ Կառավարության որոշմամբ³ Լիբանանի Հանրապետության, Սուրիոյ Արաբական Հանրապետության եւ Իրաքի Հանրապետության քաղաքացիները հնարաւորութիւն ունենին մինչեւ 2018 թուականի Դեկտեմբեր 31-ը ՀՀ քաղաքացիութիւն ձեռք բերելու համար առաջին անգամ ՀՀ քաղաքացիի անձնագիր ստանալ տուեալ պետութիւններու ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններէն կամ հիւպատոսական հիմնարկներէն: Ներկայիս այս կարգը այլեւս չի կիրառուիր, սակայն կը քննարկուի նախագիծ, որ կենթադրէ երկարացնել այս արտօնութեան կիրառումը:

³ՀՀ Կառավարութեան 2012 թուականի Յուլիս 26-ի՝ «Այն պետութիւններու ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիներուն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ձեռք բերելու կապակցութեամբ առաջին անգամ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի անձնագիր կրնայ տրուիլ օտարերկրեայ պետութիւններու մէջ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչութիւններու կամ հիւպատոսական հիմնարկներուն մէջ» N 951-Ն որոշում

1.4.4. Ո՞ր պարագաներուն երեխան ձեռք կը բերէ ԶՅ քաղաքացիութիւն

ԶՅ քաղաքացիներէն ծնած երեխան ձեռք կը բերէ ԶՅ քաղաքացիութիւն՝ անկախ այն հանգամանքէն, թէ ուր ծնած է: Եթէ ծնողներէն մէկը օտարերկրեայ քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիութեան հարցը կ'որոշեն ծնողները:

ԶՅ քաղաքացիութիւն ձեռք բերած ծնողներու երեխան ձեռք կը բերէ ԶՅ քաղաքացիութիւն ծնողի հետ համատեղ՝ անձնագիր ստանալու դիմումին հիման վրայ: Եթէ ԶՅ քաղաքացիութիւն ձեռք բերած է ծնողներէն մէկը, ապա երեխան կը դառնայ ԶՅ քաղաքացի, եթէ՝

- առկայ է ծնողներու համաձայնութիւնը.
- երեխան կը բնակի ԶՅ-ի մէջ.
- երեխան հակառակ պարագային կը դառնայ քաղաքացիութիւն չունեցող անձ:

14 -18 տարեկան երեխան պէտք է տայ իր գրաւոր համաձայնութիւնը առ այն, որ կը ցանկալ դառնալ ԶՅ քաղաքացի:

1.5. Մշտական կամ յատուկ կացութեան կարգավիճակ

1.5.1. Որո՞նք են մշտական եւ յատուկ կացութեան կարգավիճակները

ԶՅ քաղաքացի չհանդիսացող սուրիահայերը կրնան դիմել եւ ստանալ ժամանակաւոր, մշտական կամ յատուկ կացութեան կարգավիճակ: Քանի որ ժամանակաւոր ու մշտական կարգավիճակի ստացումը սուրիահայերու համար հաւասարապէս դիւրին է, իսկ ժամանակաւոր կարգավիճակը կը տրամադրուի աւելի կարճ ժամկետով, գործնականօրէն ժամանակաւոր կարգավիճակ ստանալը անիմաստ է:

Մշտական կացութեան կարգավիճակը	Յատուկ կացութեան կարգավիճակը
ԶՅ-ի մէջ մշտական բնակելու թոյլտուութիւն է, գոր կու տայ ԶՅ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութիւնը (յետայսու՝ Վարչութիւն)՝ 5 տարի ժամկետով: Կրնայ երկարաձգուիլ իւրաքանչիւր անգամ 5 տարիով:	ԶՅ-ի մէջ բնակելու թոյլտուութիւն է, որ կը տրուի ԶՅ Վարչապետի կողմէն՝ 10 տարի ժամկետով եւ կրնայ տրուիլ մէկ անգամէն աւելի:

Մշտական կարգավիճակի ստացումը էապես աւելի արագ է (մէկ ամիս), քան յատուկ կարգավիճակի ստացումը (կրնայ տեւել մինչեւ վեց ամիս):

1.5.2. Ո՞ր դիմել կացութեան կարգավիճակ ստանալու համար

Մշտական կացութեան կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթուղթերը կը ներկայացուին Վարչութիւն:

Յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու համար հնարաւոր է դիմել ինչպէս Վարչութիւն, այնպէս էլ օտար երկրի մէջ ՀՀ դեսպանութիւն եւ հիւպատոսութիւն:

1.5.3. Ո՞վ կրնայ դիմել մշտական եւ յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու համար

Մշտական կացութեան կարգավիճակ կրնան ստանալ՝

- ազգութեամբ հայ անձինք (տես վերը՝ «4.3.2. Ի՞նչ փաստաթուղթեր է անհրաժեշտ ներկայացնել»).
- ՀՀ-ի մէջ ձեռնարկատիրական գործունեութիւն իրականացնող օտարերկրացիները.
- ազգութեամբ հայ չհանդիսացող օտարերկրացիները, ովքեր միաժամանակ՝
 - ՀՀ-ի մէջ ունին ՀՀ քաղաքացի կամ հատուկ կացութեան կարգավիճակ ունեցող ամուսին կամ մերձաւոր ազգական (ծնող, զաւակ, եղբայր, քոյր, մեծ հայր, մեծ մայր, թոռնիկ).
 - ՀՀ-ի մէջ ապահովուած են բնակարանով եւ գոյութեան միջոցներով.
 - Նախքան դիմելը առնուազն 3 տարի օրինական հիմքով կը բնակին ՀՀ-ի մէջ:


Յատուկ կացութեան կարգավիճակ կրնան ստանալ՝

- ազգութեամբ հայ անձինք (տես վերը՝ «4.3.2. Ի՞նչ փաստաթուղթեր է անհրաժեշտ ներկայացնել»).
- այլ օտարերկրացիներ, ովքեր ՀՀ-ի մէջ կը ծաւալեն տնտեսական կամ մշակութային գործունեութիւն:

Յատուկ կացութեան կարգավիճակ կը տրուի 16 տարին լրացած անձերու:

Մինչեւ 16 տարին լրացած երեխաները կրնան ստանալ անվճար յատուկ անձնագիր ծնողի ցանկութեամբ, եթէ ծնողը արդէն ստացած է յատուկ կացութեան կարգավիճակ:

1.5.4. Ինչպե՞ս ստանալ մշտական կացության կարգավիճակ



* Սուրիահայերը ինչպէս նաեւ ազգութեամբ հայ այն բոլոր օտարերկրացիները, որոնց մշտական բնակութեան օտարերկրեայ պետութեան մէջ ստեղծուած է այնպիսի արտակարգ իրավիճակ, որ կը սպառնայ քաղաքացիներու կեանքին կամ առողջութեան, ազատ են մշտական կացութեան կարգավիճակի համար պետական տուրքի վճարման պարտաւորութենէն:

Երբեմն Վարչութիւնը կը պահանջէ մինչեւ կացութեան համար դիմելը ստանալ տեղեկանք Հայաստանի քաղաքացիութիւն չունենալու մասին: Ամուսնացած դիմորդներէն, որպէս կանոն, նաեւ կը պահանջուի ներկայացնել ամուսնութեան վկայականն ու անոր նօտարական թարգմանութիւնը, եթէ կացութեան համար դիմում կը ներկայացուի ամուսնութեան հիմքով:

Մշտական կացութեան կարգավիճակ ունեցող անձը ՀՀ տարածքը 6 ամիսէն աւելի ժամանակով լքելու պարագային պէտք է անոր մասին գրաւոր տեղեկացնէ Վարչութեան:

1.5.5. Ինչպէ՞ս ստանալ յատուկ կացութեան կարգավիճակ

Անձը յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու համար պէտք է ներկայացնէ հետեւեալ փաստաթուղթերը՝

1. դիմում-հարցաթերթիկ (կը լրացնէ տեղւոյն վրայ)



2. 35 x 45 մմ չափի 6 գունաւոր լուսանկար



3. անձնագիրը կամ ճամբորդական փաստաթուղթը եւ անոր նօտարական կարգով վաւերացուած հայերէն թարգմանութիւնն ու անոնց պատճենը



4. ՀՀ-ի մէջ բնակիլը հաստատող փաստաթուղթ (մուտքի վիզա, կացութեան քարտ կամ անձնագրի մէջ մուտք գործելու մասին կատարուած նշում)



5. եթէ հայ է, ապա ազգութեամբ հայ ըլլալը հիմնաւորող փաստաթուղթեր (տես նախորդ կէտը)



6. եթէ հայ չէ, ապա ՀՀ-ի մէջ իրենց տնտեսական կամ մշակութային գործունեութիւնը հիմնաւորող փաստաթուղթեր



7. պետական տուրքի վճարման անդորրագիր



Յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու ժամանակ նոյնպէս Սուրիայէն ժամանած հայերը, ինչպէս նաեւ ազգութեամբ հայ այն բոլոր օտարերկրացիները, որոնց մշտական բնակութեան օտարերկրեայ պետութեան մէջ ստեղծուած է այնպիսի արտակարգ իրավիճակ, որ կը սպառնայ քաղաքացիներու կեանքին կամ առողջութեան, ազատ են պետական տուրքի վճարման պարտաւորութենէն:



1.6. Փախստականի կարգավիճակի ստացում

1.6.1. Ո՞վ կը համարուի փախստական

Փախստական է այն օտարերկրեայ քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որ ստիպուած է լքել իր քաղաքացիութեան կամ նախկին մշտական բնակութեան երկիրը՝ որոշ հիմքերով հետապնդումներու կամ համատարած բռնութեան, արտաքին յարձակման, ներքին հակամարտութիւններու, մարդու իրաւունքներու զանգուածային խախտումներու կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձութիւններու պատճառով:

Սուրիոյ քաղաքացիական պատերազմի հետեւանքով Սուրիայէն Հայաստան տեղափոխուած բոլոր անձինք կը բաւարարեն այս պահանջը:

1.6.2. Որո՞նք չի տրամադրուի փախստականի կարգավիճակ

Փախստականի կարգավիճակի տրամադրումը կը մերժուի այն պարագային, երբ հիմքեր կան ենթադրելու, որ դիմող անձը կատարած է խաղաղութեան եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւն, կամ ոչ քաղաքական բնոյթի այլ ծանր յանցագործութիւն, ինչպէս նաեւ այն պարագային, երբ անձը կը ժամանէ մէկ այլ երկրէ, որ ապահով է, եւ ուր անձի կեանքին եւ առողջութեան վտանգ չի սպառնար, ինչը կը նշանակէ, որ ան կրնայ առանց խոչընդոտի վերադառնալ այդ երկիր:

1.6.3. Ինչպէ՞ս ստանալ փախստականի կարգավիճակ

Փախստականի կարգավիճակ (ապաստան) ստանալու համար կարելի է դիմել՝

- ՀՀ ազգային անվտանգութեան մարմին
- ՀՀ ԱԱԾ սահմանապահ զօրքեր
- ՀՀ ոստիկանութիւն
- ազատագրկման վայրի վարչակազմ կամ
- ՀՀ տարածքային կառավարման նախարարութեան գաղթեալներու ծառայութիւն

Ապաստան ստանալու փուլերը՝



- 1.** Ներկայացնել դիմում՝ մանրամասնելով ապաստան հայցելու պատճառները
- 2.** Անցնիլ հարցազրույց, բացառությամբ եթե ապաստանի կարիքը ակնյայտ է եւ հիմնաւոր
- 3.1** Ստանալ փախստական ճանչնալու եւ ապաստան տրամադրելու մասին որոշում ԿԱՄ
- 3.2** Ստանալ մերժման որոշում
- 4.** Ստանալ փախստականի նոյնականացման քարտ

Դիմումի քննութիւնը կ'իրականացուի 3 ամսուան ընթացքին գաղթեալներու ծառայութեան կողմէն:

1.6.4. Ի՞նչ արտօսութիւններէն կ'օգտուի փախստականը

Բացի վերը նշուած երաշխիքներէն (տես՝ 33 քաղաքացիութեան, կացութեան կարգավիճակի ու փախստականի կարգավիճակի հիմնական տարբերութիւնները), փախստականները ունին նաեւ որոշ լրացուցիչ երաշխիքներ:

Այսպէս, փախստականները իրենց վերաբերող որեւէ գործով **կրնան անվճար իրաւաբանական օգնութիւն ստանալ** հանրային պաշտպանի գրասենեակի կողմէն:



Անվճար իրաւաբանական օգնութիւն չեն կրնար ստանալ փախստականները՝

- ովքեր ակնյայտօրէն ունին բաւարար միջոցներ՝ անձամբ վճարելու իրենց ծախսերը.
- որուն վեճը կապուած է ձեռնարկատիրական (պիզնես) գործունէութեան հետ.
- ովքեր դատարանին կը ներկայացնեն 1 000 000 ՀՀ դրամ եւ աւելի պահանջ:

Ապաստան հայցելու ընթացքին (մինչեւ դիմումի քննարկման աւարտը) ապաստան հայցողը ու անոր ընտանիքի անդամները իրաւունք ունին ապաստանիլ ժամանակաւոր տեղաւորման կէտրոնէն ներս, ուր անոնց կը տրամադրուի սնունդ, սպիտակեղէն, անձնական առողջաբանական պարագաներ, անհրաժեշտութեան պարագային՝ հագուստ եւ կօշիկ: Ժամանակաւոր տեղաւորման կէտրոնէն ներս տեղաւորման անհնարիւնութեան պարագային բաւարար միջոցներ չունեցող ապաստան հայցողներուն կը տրամադրուի դրամական օգնութիւն հետեւեալ չափով՝ դիմումատուին՝ 20.000 դրամ, իսկ անոր ընտանիքի իւրաքանչիւր անդամին՝ 15.000-ական դրամ:

1.7. ՀՀ բնակչութեան պետական արձագրատան կողմէն հաշուառում

ՀՀ-ի մէջ մշտապէս բնակող բոլոր անձինք պետք է ունենան հաշուառում: Հաշուառումը կ'իրականացուի ՀՀ բնակչութեան պետական արձագրատան մէջ գրանցուելու միջոցով, զոր կ'իրականացնէ ՀՀ ոստիկանութիւնը:

Հաշուառման համար անձը պետք է ՀՀ ոստիկանութեան տարածքային բաժին ներկայացնէ հետեւեալ փաստաթուղթերը՝



1.8. Հանրային ծառայութիւններու համարանիշի ստացում

Հայաստանի մէջ հանրային ծառայութիւններու համարանիշ կը տրուի ՀՀ քաղաքացիներուն, ՀՀ-ի մէջ մշտապէս բնակող՝ քաղաքացիութիւն չունեցող անձերու, փախստականներուն, կացութեան կարգավիճակ ունեցող կամ օրինական հիմքերով ՀՀ-ի մէջ գտնուող ուրիշ օտարերկրացիի: Հանրային ծառայութիւններու համարանիշը, իբրեւ կանոն, կը պահանջուի դրամատնային հաշիւ բանալու, աշխատանքի ընդունուելու համար, ինչպէս նաեւ պետական շարք մը ծառայութիւններէն օգտուելու համար: Հայաստանի մէջ հանրային ծառայութիւններու համարանիշ ստանալու համար անհրաժեշտ է դիմել բնակութեան վայրի ոստիկանութեան բաժանունը: Դիմելու ժամանակ պետք է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի նոյնականացման քարտ): Հանրային ծառայութիւններու համարանիշը նաեւ ինքնաբերաբար կը տրամադրուի ՀՀ քաղաքացիներուն եւ նոյնականացման քարտ կը տրուի:

1.9. Վարորդական վկայականի ձեռքբերում

Հայաստանի մէջ անձը (ՀՀ քաղաքացի, փախստականի կարգավիճակ, կացութեան կարգավիճակ ունեցող անձ կամ օրինական հիմքերով ՀՀ-ի մէջ գտնուող ուրիշ անձ) կրնայ վարորդական վկայական ստանալ վարորդական քննութիւնները բարեյաջող յանձնելու արդիւնքով:

Քննութիւններուն չեն կրնար մասնակցիլ թմրաբանական բժշկական հաստատութիւններուն մէջ հաշուառուած անձերը, հոգեկան հիւանդութիւն կամ առողջական այլ սահմանափակումներ ունեցող անձերը, ինչպէս նաեւ դատարանի որոշմամբ վարելու իրաւունքէն զրկուած անձերը:

Վարորդական վկայական ստանալու համար կը ներկայացուին հետեւեալ փաստաթուղթերը՝

1. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի նոյնականացման քարտ).
2. եթէ անձը հաստատող փաստաթուղթի մէջ չկայ նշում հաշուառման (փաստացի բնակութեան) վայրի մասին, ապա պետք է լրացուցիչ ներկայացնել հաշուառման վայրի մասին տեղեկանք.
3. տեսական քննութիւն ընդունելու համար օրէնքով սահմանուած պետական տուրքի (3,000 ՀՀ դրամ) վճարման անդորրագիր.
4. գործնական քննութիւն ընդունելու համար օրէնքով սահմանուած պետական տուրքի (3,000 ՀՀ դրամ իւրաքանչիւր կարգի համար) վճարման անդորրագիր.
5. գործնական քննութիւն ընդունելու օրէնքով սահմանուած ծառայութեան վճարի (10,000 ՀՀ դրամ) վճարման անդորրագիր.



6. վարորդական վկայական տալու համար օրենքով սահմանուած պետական տուրքի (12,000 ՀՀ դրամ) վճարման անդորրագիր:

Որակաւորման քննութիւնները բաղկացած են 2 փուլէ՝ տեսական եւ գործնական քննութիւններէ:

Վարորդական իրաւունքի վկայականը կը տրուի 10 տարի ժամկետով:

1.10. Երկքաղաքացիութիւն

ՀՀ երկքաղաքացի կը համարուի այն անձը, ով ՀՀ քաղաքացիութենէն բացի ունի նաեւ այլ պետութեան քաղաքացիութիւն: ՀՀ օրէնսդրութեան համաձայն՝ ՀՀ երկքաղաքացին Հայաստանի Հանրապետութեան համար կը ճանչցուի միայն որպէս ՀՀ քաղաքացի:

Այսինքն, այն սուրիահայերը, ինչպէս նաեւ այլ օտարերկրեայ քաղաքացիները, որոնք ունին նաեւ ՀՀ քաղաքացիութիւն, կ'օգտուին ՀՀ քաղաքացիին տրուող բոլոր իրաւունքներէն եւ կը կրեն բոլոր պարտականութիւնները, ներառեալ՝ ՀՀ զինուած ուժերու մէջ պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելու պարտականութիւնը:

Պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելու պարտականութենէն կ'ազատին երկքաղաքացի հանդիսացող այն սուրիահայերը, որոնք մինչեւ ՀՀ քաղաքացիութիւն ընդունիլը Սուրիոյ մէջ (կամ այլ երկրի մէջ) անցած են պարտադիր զինուորական ծառայութիւն առնուազն 12 ամիս ժամկետով:

2. Աշխատանքը Հայաստանի մէջ

Հայաստանի մէջ ռեւէ անձ (ՀՀ քաղաքացի, փախստականի կարգավիճակ կամ կացութեան կարգավիճակ ունեցող կամ ապաստան հայցող անձ) աշխատելու իրաւունք ունի:

Հայաստանի մէջ առանց աշխատանքի թոյլտւութեան կրնան աշխատիլ՝

1) ՀՀ քաղաքացիները, փախստականի կարգավիճակ, ինչպէս նաեւ կացութեան յատուկ կամ մշտական կարգավիճակ ունեցողները.

2) ՀՀ-ի մէջ ժամանակաւոր կացութեան կարգավիճակ ունեցողները, որոնք զայն ստացած են ՀՀ քաղաքացիի կամ ՀՀ-ի մէջ մշտական կամ յատուկ կացութեան կարգավիճակ ունեցող օտարերկրացիի ամուսին կամ մերձաւոր ազգական (ծնող, զաւակ, եղբայր, քոյր, մեծ հայր, մեծ մայր, թոռնիկ) ըլլալու հիմքով.

3) 33-ի մեջ ժամանակաւոր կացութեան կարգավիճակ ունեցողները, ովքեր զայն ստացած են 33-ի մեջ ժամանակաւոր կացութեան կարգավիճակ ունեցող օտարերկրացիի ամուսին, ծնող կամ զաւակ ըլլալու հիմքով.

4) որոշակի դասի պատկանող, մասնագիտութիւններ ունեցող եւ կազմակերպութիւններու/ հաստատութիւններու մեջ աշխատող կամ առեւտրային ընկերութիւններու հիմնադիր եւ/կամ տնօրէն հանդիսացող անձինք:

Մնացած բոլոր պարագանարեւուն գործատուն պէտք է նախապէս ստանայ աշխատանքի թոյլտուութիւն:

Չափահաս (18 տարեկան եւ ավելին) անձինք կրնան ազատ ընդունուիլ աշխատանքի: 14-16 տարեկան անձինք կրնան աշխատիլ ծնողներէն մէկուն կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրաւոր համաձայնութեամբ, եթէ աշխատանքը չի վնասեր անոնց առողջութեան, անվտանգութեան, կրթութեան եւ բարոյականութեան: 16-18 տարեկան անձինք կրնան ազատ աշխատիլ՝ աշխատաժամանակի կրճատ տեւողութեամբ (շաբաթական մինչեւ 36 ժամ) աշխատանք:

Աշխատանքի ընդունուելու ժամանակ պէտք է ստորագրել աշխատանքային պայմանագիր, կամ աշխատանքի ընդունման մասին հրաման:

Աշխատանքի ընդունուելու ժամանակ գործատուին պէտք է ներկայացնել՝

- ✓ անձը հաստատող փաստաթուղթ.
- ✓ սոցիալական քարտ, 3Ծ3 (հանրային ծառայութեան համարանիշ) կամ տեղեկանք 3Ծ3 չունենալու մասին.
- ✓ կրթութեան կամ անհրաժեշտ որակաւորման մասին վկայական (եթէ կրթութիւնը կամ որակաւորումը կը պահանջուի աշխատանքի համար).
- ✓ տեղեկանք առողջական վիճակի մասին, եթէ տուեալ աշխատանքի համար Կառավարութեան որոշմամբ կը պահանջուի նման տեղեկանք.
- ✓ մինչեւ 16 տարեկան աշխատողի պարագային՝ ծնողներէն մէկուն, որդեգրողի կամ հոգաբարձուի գրաւոր համաձայնութիւնը.
- ✓ օրէնքով կամ այլ օրինաչափական իրաւական գործերով սահմանուած այլ փաստաթուղթեր:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ աշխատանքի ընդունուելու ժամանակ կ'արգիլուի պահանջել այնպիսի փաստաթուղթեր, որոնք նախատեսուած չեն օրէնքով կամ այլ օրինաչափական իրաւական գործերով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութեան զբաղուածութեան պետական գործակալութիւնը կ'աջակցի աշխատանք փնտռողներուն գտնել իրենց մասնագիտութեան համապատասխան աշխատանք:

Ցանկութիւն ունեցողները կրնան դիմել իրենց բնակութեան վայրը սպասարկող զբաղուածութեան տարածքային կեդրոններ, որոնց հասցէները եւ այլ կապի տուեալները հասանելի են հետեւեալ յղումով՝ <http://employment.am/am/feedback.html>:

2բաղուածութեան տարածքային կենդրոնի մէջ հաշուառուելու համար, աշխատանք փնտռող անձը կը ներկայացնէ է հետեւեալ փաստաթուղթերը՝

- ✓ անձը հաստատող փաստաթուղթ (ներառեալ՝ կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձը՝ համաձայնեցուած ճամբորդական փաստաթուղթը),
- ✓ սոցիալական քարտ, ՀԾՀ (հանրային ծառայութեան համարանիշ) կամ տեղեկանք ՀԾՀ չունենալու մասին,
- ✓ կրթութիւնը, մասնագիտական որակաւորումը հաւաստող համապատասխան փաստաթուղթեր՝ անոնց առկայութեան պարագային,
- ✓ աշխատանքային գրքոյկ կամ աշխատանքային գործունեութեան մասին տեղեկութիւնները հաստատող այլ փաստաթուղթեր կամ արխիւային տեղեկանքներ,
- ✓ զինուորական գրքոյկ՝ զինծառայողներու կողմէն,
- ✓ գրաւոր դիմում՝ նշելով իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկութիւններ (փոստային հասցէն, ինչպէս նաեւ հեռաձայնի թիւը, ներառեալ՝ բջիջային եւ (կամ) ելեկտրոնական փոստի հասցէն):
- ✓ հաշմանդամութիւն ունենալու վերականգնել՝ վերականգնողական անհատական ծրագիրը:

3. Ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք

Ընդհանուր առմամբ, Հայաստանի մէջ ընտրելու իրաւունք ունին միայն ՀՀ չափահաս (18 տարեկանը լրացած) քաղաքացիները: Սակայն, տեղական ինքնակառավարման մարմիններու (աւագանիի) ընտրութիւններուն ընտրելու իրաւունք ունին նաեւ քուէարկութեան օրը 18 տարին լրացած՝ կացութեան կարգավիճակ կամ փախստականի կարգավիճակ ունեցող (ներառեալ քաղաքացիութիւն չունեցող) անձինք, եթէ անոնք մինչեւ ընտրութիւնները առնուազն մէկ տարի հաշուառուած են համապատասխան համայնքի մէջ:

4. Չինապարտություն եւ գինուորական ծառայություն

Հայաստանի մեջ պարտադիր ժամկետային գինուորական ծառայություն (24 ամիս) պետք է անցնին 18-27 տարեկան արական սեռի ՀՀ քաղաքացիները: Որպես կանոն անձը կը զորակոչուի 18 տարին լրանալէն անմիջապէս ետք, բայց որոշ պարագաներուն անոր կրնայ տրուիլ տարեկետում (ծառայութեան ժամանակաւոր յետաձգում):

4.1. Ո՞ր դէպքերուն է հնարաւոր ստանալ տարեկետում (ծառայութեան ժամանակաւոր յետաձգում)

Անձը ունի տարեկետման իրաւունք՝

- առողջական վիճակէն մեկնելով,
- ընտանեկան վիճակէն մեկնելով,
- ուսումնական հաստատութենէն ներ ուսանելու պայմանաւորուածութիւն,
- Կառավարութեան որոշմամբ, եթէ գիտութեան, կրթութեան, մշակոյթի, արուեստի եւ մարմնամարզութեան բնագաւառներէն ներս ունի նշանակալի նուաճումներ:

4.1.1. Որո՞նք են առողջական վիճակով պայմանաւորուած տարեկետման հիմքերն ու կարգը

Եթէ անձի մօտ յայտնաբերուած է ծառայութիւնը խոչընդոտող հիւանդութիւն, բայց ան կրնայ բուժուիլ, ապա տարեկետում կը տրուի 3 անգամ մեկական տարիով՝ բուժուելու համար: Իւրաքանչիւր տարին լրանալէն ետք անձը կ'անցնէ բժշկական փորձաքննութիւն՝ որոշելու բուժումը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Եթէ անձի մօտ առկայ է այնպիսի հիւանդութիւն, որ ժամանակաւորապէս կը խոչընդոտէ ծառայութիւնը, եւ հնարաւոր չէ գինք կարճ ժամկետի ընթացքին բուժել, ապա անձին կը տրուի տարեկետում մեկ անգամ 3 տարիով եւ ան կը ճանչցուի ծառայութեան համար ժամանակաւորապէս ոչ պիտանի: 3-ամեայ ժամկետի ավարտին անձը կրկին կ'անցնի բժշկական փորձաքննութիւն:

4.1.2. Որո՞նք են ընտանեկան վիճակով պայմանաւորուած տարեկետման հիմքերն ու կարգը

Հիմք ընդունելով անձի ընտանեկան վիճակը, ան կրնայ ստանալ տարեկետում հետեւեալ պարագաներուն՝



- ունի առանց մօր մեծցող երեխայ՝ **մինչև 27 տարեկան լրանալու օրը,**
- ունի երկու կամ ավելի երեխայ, բացառությամբ որդեգրուած երեխաներու՝ **մինչև 27 տարեկան լրանալու օրը,**
- ունի անչափահաս քոյր կամ եղբայր, որուն համար կը հանդիսանայ միակ խնամակալ, կամ քոյրը կամ եղբայրը չափահաս են, սակայն առաջին կամ երկրորդ խումբի հաշմանդամ է (են) կամ դատարանի վճիռով ճանչցուած է (են) անգործունակ՝ **մինչև 27 տարեկան լրանալու օրը,**
- ծնողները (միայնակ ծնողը) 65 տարեկան է (են) կամ առաջին կամ երկրորդ խումբի հաշմանդամ կամ դատարանի վճիռով ճանչցուած է (են) անգործունակ եւ չունի (չունին) այլ զաւակ՝ զինք (զիրենք) խնամելու համար՝ **մինչև 27 տարեկան լրանալու օրը,** ծնողները (միայնակ ծնողը) 65 տարեկան է (են) կամ առաջին կամ երկրորդ խումբի հաշմանդամ կամ դատարանի վճիռով ճանչցուած է (են) անգործունակ եւ ունին այլ զաւակ, ով անչափահաս է կամ ունի հաշմանդամութիւն, կամ դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած վճիռով ճանչցուած է անգործունակ կամ կը գտնուի պարտադիր զինուորական ծառայութեան մէջ՝ **մինչև այլ զաւակի 18 տարեկանը կամ բանակէն վերադառնալը,**
- երկրորդ երեխայով կամ ամուսնու զոյգ երեխայով վեցամսեայ յիշուած մէջ գտնուող կին՝ **մինչև երեխայի (զոյգ երեխաներու) ծննդեան օրը:**

4.1.3. Որո՞նք են ուսումնական հաստատութենէն ներս ուսանելով պայմանաւորուած տարեկէտման հիմքերն ու կարգը

Անձը կրնայ տարեկէտում ստանալ, եթէ կ'ուսանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններէն ներս (պաքալորիա BA կամ մասթրզի MA ծրագրերով) եւ ԶԶ պաշտպանութեան նախարարութեան հետ կնքած է պայմանագիր: Պայմանագիրով անձը կը պարտաւորուի ուսանելու ընթացքին անցնիլ զինուորական պատրաստութիւն եւ ուսումը ավարտելուն պէս ծառայել բանակին: Այս պարագային տարեկէտում կը տրուի **մինչև ուսումնառութեան ավարտը, բայց ոչ ավելի, քան անձի 26 տարեկանը լրանալու օրը:**

Անձը կրնայ տարեկէտում ստանալ նաեւ, եթէ կ'ուսանի հանրակրթական, ինչպէս նաեւ արհեստագործական կրթական ծրագիրով: Նման պարագայի տարեկէտում կը տրուի **մինչև ուսումնառութեան ավարտը, բայց ոչ ավելի, քան անձի 19 տարեկանը լրանալու օրը:**

4.2. Ո՞ր դեպքերուն է հնարաւոր ազատիլ պարտադիր ծառայութեան պարտաւորութենէն

Անձը կ'ազատի պարտադիր զինուորական ծառայութենէն, եթէ՝

- առողջական վիճակի պատճառով կը ճանչցուի զինծառայութեան համար ոչ պիտանի.
- մինչեւ 33 քաղաքացի դառնալը առնուազն **12 ամիս ծառայած է այլ պետութեան զինուած ուժերուն** կամ առնուազն **18 ամիս անցած է այլընտրանքային զինուորական ծառայութիւն.**
- ընտանիքի միակ արու զաւակն է եւ միաժամանակ ունի 33 պաշտպանական մարտերուն զոհուած ծնող, քոյր կամ եղբայր.
- **27 տարին լրանալու օրը** ունի տարեկէտման իրաւունք հետեւեալ հիմքերէն որեւէ մէկով՝
 - ծնողները (միայնակ ծնողը) 65 տարեկան է (են) կամ առաջին կամ երկրորդ խումբի հաշմանդամ կամ դատարանի վճիռով ճանցչուած է (են) անգործունակ եւ չունի (չունին) այլ զաւակ՝ զինք (զիրենք) խնամելու համար կամ այլ զաւակը անչափահաս է կամ ունի հաշմանդամութիւն, կամ դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած վճիռով ճանչցուած է անգործունակ կամ կը գտնուի պարտադիր զինուորական ծառայութեան մէջ,
 - ունի առանց մօր մեծցող երեխայ,
 - ունի երկրորդ երեխայով կամ առնուազն զոյգ երեխայով վեցամսեայ յղիութեան մէջ գտնուող կին
 - ունի երկու կամ աւելի երեխայ, բացառութեամբ որդեգրուած երեխաներէն,
 - ունի անչափահաս քոյր կամ եղբայր, որուն համար կը հանդիսանայ միակ խնամակալ, կամ քոյրը կամ եղբայրը չափահաս են, սակայն առաջին կամ երկրորդ խումբի հաշմանդամ է (են) կամ դատարանի վճիռով ճանչցուած է (են) անգործունակ,
 - առողջական վիճակի պատճառով 3 անգամ մէկական տարիով ստացած է տարեկէտում՝ բուժման նպատակներով կամ մէկ անգամ 3 տարիով ստացած է տարեկէտում՝ ժամանակաւորապէս ոչ պիտանի ճանչցուելու պատճառով:

5. Առողջապահութիւն: Բժշկական օգնութիւն եւ սպասարկում

Անձը իրաւունք ունի ստանալու բժշկական օգնութիւն եւ սպասարկում՝ անկախ իր կարգավիճակէն (ըլլայ 33 քաղաքացի, փախստական, ապաստան հայցող անձ, թէ կացութեան կարգավիճակ ունեցող անձ):

Սուրիահայերը պետական պատուերի ծիրէն ներս անվճար բժշկական օգնութիւն եւ սպասարկում կը ստանան 33 քաղաքացիներու հետ հաւասար հիմքերով:

Արտօճեալ պայմաններով (այսինքն՝ պիտճԷԷՆ մասնակի փոխհատուցմամբ) բժշկական օգնութիւն եւ սպասարկում կարելի է ստանալ, եթէ անձը ՀՀ քաղաքացի է կամ ունի փախստականի կարգավիճակ: Պետք է նշել, որ գործնականօրէն անիկա հասանելի է նաեւ Սուրիոյ մէջ ընթացող պատերազմի հետեւանքով Հայաստան տեղափոխուած բոլոր սուրիահայերուն:

Ասվճար բժշկական օգնութիւն եւ սպասարկում ստանալու իրաւունք ունին՝

- նպաստառուները (30 եւ անելի միաւոր ունեցող).
- հաշմանդամները.
- մինչեւ 18 տարեկան երեխաները.
- Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները եւ անոնց հաւասարեցուած անձինք.
- վերարտադրութեան տարիքի կանայք՝ յղիութեան, ծննդաբերութեան եւ յետծննդեան շրջանին.
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներու շարքին պատկանող անձինք՝ 18-23 տարեկան անձինք.
- բժշկական-ընկերային փորճաքննութեան ոլորտէն ներս իրաւասու պետական մարմնի ուղեգիրով լրացուցիչ բժշկական հետազօտութեան ենթարկուողները.
- զօրակոչային տարիքի անձինք (հիւանդանոցային բժշկական օգնութիւն եւ հիւանդանոցային փորճաքննութիւն).
- զինճառայողները եւ անոնց հաւասարեցուած անձինք, անոնց ընտանիքներու անդամները, Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան ժամանակ, ինչպէս նաեւ ճառայողական պարտականութիւնները կատարելու ընթացքին զոհուած (մահացած) զինճառայողներու ընտանիքներու անդամները, երկարամեայ ճառայութեան կամ հաշմանդամութեան զինուորական կենսաթոշակ ստացող նախկին զինճառայողները.
- փրկարարական ճառայողները եւ անոնց ընտանիքներու անդամները, կենսաթոշակի անցնելու համար աշխատանքէն արճակուած փրկարարական ճառայողները, հաշմանդամ դարճած փրկարարական ճառայողները, ճառայութեան ընթացքին զոհուած (մահացած) փրկարարական ճառայողներու ընտանիքներու անդամները.
- ճերբակալուածները, կալանաւորուած անձինք եւ ազատագրկման դատապարտուածները.
- ծերանոցներու եւ անօթեւաններու ժամանակաւոր կացարաններու մէջ խնամուող անձինք.
- բռնադատուածները.
- Չեռնոպիլի հիւլեակայանի վթարի վերացման աշխատանքներու մասնակիցները.

- մարդոց կողմէ շահագործման (թրաֆիքինկի) ենթարկուած անձինք.
- ապաստան հայցողներն ու անոնց ընտանիքներու անդամները.
- գինուորական ծառայութեան ընթացքին ստացած խեղման, վնասի, հիւանդութեան պատճառով զօրացրուած անձինք, որոնք բժշկական-ընկերային փորձաքննութեան արդիւնքով հաշմանդամ չեն ճանչցուած (հիւանդանոցային բժշկական օգնութիւն եւ սպասարկում՝ բժշկական-ընկերային փորձաքննութեան ոլորտէն ներս իրաւատու պետական մարմնի կողմէ կազմուած վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներէն ներս):

Բացի այդ, անկախ տարիքէն կամ ընկերային վիճակէն, անվճար են հիւանդանոցային բժշկական օգնութեան եւ սպասարկման հետեւեալ տեսակները՝ վերակենդանացման միջոցները, ծննդօգնութիւնը, երիկամի լուացումը (հեմոտիալիզ), արտահիւանդանոցային բժշկական օգնութիւնը ու սպասարկումը, ինչպէս նաեւ թոքախտի (տուպերկուլիոզ), հոգեկան, նարկոլոգիական, աղիքային եւ այլ վարակիչ հիւանդութիւններու պարագային բժշկական օգնութիւնը, 0-7 տարեկան երեխաներու բժշկական օգնութեան ծառայութիւնները, 12 տարեկան երեխաներուն կը տրամադրուին պետութեան կողմէ երաշխաւորուած անվճար ատամնաբուժական առաջնահերթ կանխարգիլման ծառայութիւններ ինչպէս նաեւ պետութեան կողմէ երաշխաւորուած որոշ արտահիւանդանոցային բժշկական օգնութիւնը եւ սպասարկումը (բացառութեամբ ատամնաբուժական):

Սակայն, պէտք է նկատել, որ 7-18 տարեկան երեխաներու հիւանդանոցային բուժումը, բացառութեամբ վերը նշուած պայմաններուն (այսինքն եթէ երեխան հաշմանդամ է, առանց ծնողական խնամքի մնացած է եւ այլն), անվճար կամ արտօսեալ պայմաններով չեն իրականացուիր:

Բոլորին արտօսեալ պայմաններով (իսկ նիւթապէս անապահովներուն՝ անվճար) հասանելի են նաեւ սեռական վարակներու, ուռուցքաբանական եւ արիւնաբանական, կանանց հիւանդութիւններու հետ կապուած, ինչպէս նաեւ անյետաձգելի բժշկական օգնութիւնը:

Պէտք է նաեւ իմանալ, որ յատկապէս սուրիահայ երեխաներն ու հաշմանդամութիւն ունեցող երեխաները (մինչեւ 18 տարեկան) ունին անվճար բուժօգնութիւն եւ սպասարկում ստանալու, օրթեգաւորման իրաւունք, ինչպէս նաեւ կ'օգտուին անվճար շարժական-դարմանատնային ծառայութենէն:

6. Հաշմանդամության վերաբերեալ հարցեր

6.1. Ո՞վ կը համարուի հաշմանդամ Հայաստանի մեջ

Հայաստանի մեջ հաշմանդամ համարուելու համար անհրաժեշտ է Հայաստանի մեջ ստանալ հաշմանդամության կարգ: Հաշմանդամության կարգ կրնայ ստանալ ուեւէ անձ (քաղաքացի, փախստականի կարգավիճակ կամ կացութեան կարգավիճակ ունեցող անձ), որ ունի հասարակական պաշտպանութեան կարիք հաշմանդամութեան պատճառով: Անձը հաշմանդամ կը ճանչցուի համապատասխան բժշկական-ընկերային փորձաքննութեան արդիւնքով:

Հաշմանդամութեան հիմք կը հանդիսանայ անձի ստացած խեղումը, հիւանդութիւնը կամ վնասը, ընդհանուր կամ մանկութենէն ունեցած հիւանդութիւնը, զինուորական կամ պատերազմական գործողութիւններուն մասնակցութեան հետեւանքով ստացած վնասը, խեղումը կամ հիւանդութիւնը, որոնք կը սահմանափակեն անոր կենսագործունեութիւնն ու աշխատելու հնարաւորութիւնները:

Առաջին խումբի հաշմանդամութիւնը կը տրուի **երկու տարի ժամկետով**, 2-րդ եւ 3-րդ խումբերու հաշմանդամութիւնը՝ **մէկ տարի ժամկետով**, իսկ ,հաշմանդամ երեխայէ կարգավիճակը՝ **երկու տարի ժամկետով կամ մինչեւ 18 տարեկան**: Կենսաթոշակի տարիքի անձերու, ինչպէս նաեւ 2, 4 կամ 7 տարի դիտում իրականացնելէն ետք անձի մօտ որեւէ փոփոխութիւններու ի յայտ չգալու պարագային տրամադրուող հաշմանդամութեան խումբը կը սահմանուի **անժամկետ**:

6.2. Ինչպե՞ս ստանալ հաշմանդամության կարգ

Հաշմանդամության կարգ ստանալու համար անհրաժեշտ է կատարել հետևելալ գործողությունները՝



Անձին ուղեգիր կը տրամադրուի այն բժշկական հաստատութեան կողմէն, որ իրականացուցած է կամ կը շարունակէ իրականացնել բուժման եւ վերականգնողական միջոցառումներ, սակայն բուժումը սկսելէն առնուազն 3 ամիս անց:

Փորձաքննութեան իրականացման համար պետք է դիմում ներկայացնել համապատասխան յանձնաժողով՝ կցելով բոլոր վերաբերելի փաստաթուղթերը: Դիմումը կրնայ ներկայացուիլ ինչպէս առձեռն, այնպէս ալ ելեկտրոնային եղանակով:

Եթէ անձը չի կրնար տեղաշարժիլ կամ ներկայանալ յանձնաժողով՝ հետազօտութեան, ապա փորձաքննութիւնը կ'իրականացուի անոր գտնուելու վայրի՝ հիւանդանոցի կամ տան մէջ:

Փորձաքննութեան ժամանակ յանձնաժողովի անդամները կ'իրականացնեն անձի զննումը, կը ձեւակերպեն փորձաքննական ախտորոշումը եւ կը գնահատեն անոր կենսագործունեութեան սահմանափակումներու աստիճանը: Արդիւնքները քննարկելէն ետք, յանձնաժողովը կ'ընդունի **փորձաքննական որոշում**, եւ անձի անաշխատունակութեան չափի աստիճանի հիման վրայ, կ'որոշուի հաշմանդամութեան խումբը:

Հաշմանդամութեան նպաստը կը նշանակուի այն անձին, ով իրաւունք չունի ստանալ ծերութեան կենսաթոշակ, ինչպէս նաեւ, հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցողին: Նպաստը կը սահմանուի հաշմանդամութեան ամբողջ ժամանակահատուածի համար: Այս պարագային եւս սուրիահայերը ՀՀ քաղաքացիներու հետ համահաւասար կ'օգտուին նշուած իրաւունքէն:



6.3. Ի՞նչ երաշխիքներ կը տրամադրուին հաշմանդամության պարագային

Եթե անձը ունի կամ ստացած է հաշմանդամության կարգ, ապա անոր կը տրամադրուի ամսական նպաստ՝

- առաջին խումբի հաշմանդամի համար՝ 21 500 դրամ,
- երկրորդ խումբի հաշմանդամի համար՝ 19 000 դրամ,
- երրորդ խումբի հաշմանդամի համար՝ 16 000 դրամ:

Բացի այդ, կրնան տրամադրուիլ նաեւ հետեւեալ արտօնութիւնները՝

- **անվճար ընդունելութիւն համալսարան (ԲՈՒՀ)**, եթե անձը առաջին եւ երկրորդ խումբերու հաշմանդամ եւ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունի եւ ընդունելութեան քննութիւնները դրական գնահատականներով յանձնած է՝ հաւաքելով վճարովի համակարգի համար առնուազն անցումային միաւորներ.
- պետական պիտօճէի միջոցներու հաշւոյն **ուսման վարձի հատուցում**, եթե անձը ընդունուած է եւ կ'ուսանի պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատութիւններէն ներս եւ առաջին եւ 2-րդ խումբի հաշմանդամ եւ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունի.
- **կրթաթոշակ ստանալու իրաւունք**, անձը ունի այս իրաւունքը անկախ ստացուող նպաստ կամ թոշակ ստանալու հանգամանքէն, եթե կ'ուսանի ցերեկային ուսուցման համակարգով եւ հերթական քննութիւններն ու ստուգարքները դրական գնահատականներով յանձնած է.
- **աշխատաժամերու կրճատուած տեւողութիւն՝** շաբաթական 36 ժամէն ոչ անելի առաջին եւ 2-րդ խումբի հաշմանդամներու համար.
- **փորձաշրջանի բացակայութիւն**, աշխատանքի ընդունելու ժամանակ փորձաշրջան չի սահմանուիր: Աշխատողներու թիւի կամ հաստիքներու կրճատման ժամանակ աշխատանքի հաւասար արտադրողականութեան եւ նոյն որակաւորման պարագային անձը կ'օգտուի աշխատանքի մէջ մնալու առաւելութենէն.
- **բնակութեան վայրին քով կառատուն կառուցելու իրաւունք**, որ կը տրուի յենաշարժական համակարգի խանգարումներ ունենալու պարագային:

6.4. Ինչպե՞ս կ'իրականացուի տարեց եւ/կամ հաշմանդամութիւն ունեցող անձերու խնամքը

Տարեց եւ (կամ) հաշմանդամութիւն ունեցողներուն խնամքը կը տրամադրուի տնային պայմաններու մէջ կամ յատուկ (մասնագիտական) հաստատութիւններու մէջ (օրինակ՝ ծերանոցներ) եւ սոցիալական հոգածութեան ցերեկային կեդրոններէն ներս:

Խնամք կրնան ստանալ բոլոր սուրիահայերը՝ անկախ ԶԶ քաղաքացի կամ փախստական ըլլալու հանգամանքէն:

7. Պետական նպաստներ

7.1. Ի՞նչ պետական նպաստներ են հասանելի սուրիահայերուն

Սուրիահայերուն հասանելի են հետեւեալ նպաստները (անկախ ԶԶ քաղաքացի ըլլալու, փախստականի կամ կացութեան կարգավիճակ ունենալու փաստէն).՝

- ընտանեկան նպաստ.
- սոցիալական նպաստ.
- հրատապ օգնութիւն.
- երեխայի ծննդեան միանուագ նպաստ.
- մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ.
- ժամանակաւոր անաշխատունակութեան նպաստ.
- մայրութեան նպաստ.
- ծերութեան նպաստ.
- հաշմանդամութեան նպաստ.
- կերակրողը կորսնցնելու պարագայի նպաստ.
- թաղման նպաստ:

7.1.1. Ո՞վ ունի ընտանեկան նպաստի իրաւունք

Եթէ ընտանիքի մէջ կայ մինչեւ 18 տարեկան անդամ, եւ ընտանիքի անապահովութեան միաւորը բարձր է 30-էն, ապա կարելի է դիմել եւ ստանալ ընտանեկան նպաստ:

7.1.2. Ո՞վ ունի սոցիալական նպաստի իրաւունք

Եթէ ընտանիքի մէջ չկայ մինչեւ 18 տարեկան անդամ, եւ ընտանիքի անապահովութեան միաւորը բարձր է 30-էն, ապա կարելի է դիմել եւ ստանալ ընտանեկան նպաստ:

7.1.3. Ո՞վ ունի հրատապ օգնութեան իրաւունք

Եթէ ընտանիքը դիմելու պահուն արդէն իսկ ունի ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրաւունք, կարելի է ստանալ **միանուագ հրատապ օգնութիւն**, եթէ՝

- ընտանիքի մէջ ծնած է երեխայ.
- երեխան առաջին դասարան գացած է.
- ընտանիքի անդամը մահացած է:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրաւունք չունեցող եւ անապահովութեան «0» միաւորէն բարձր անապահովութեան միաւոր ունեցող անձը, ով կը գտնուի կեանքի դժուարին եւ ծանր պայմաններու մէջ, ունի **եռամսեակային հրատապ օգնութեան իրաւունք**: Օգնութիւնը կը տրամադրուի՝ հաշուի առնելով ընտանիքի մէջ գործազուրկի, մէկէ աւելի երեխայի, երկարատեւ հիւանդի, ուսանողի առկայութիւնը, ընտանիքի անդամի մահը, բացառապէս ծերերէն, հաշմանդամներէ բաղկացած ըլլալու փաստը, բնակարանի փլուզման կամ հրդեհման հանգամանքները:

7.1.4. Ո՞վ ունի երեխայի ծննդեան միանուագ նպաստի իրաւունք

Ընտանիքի մէջ երեխայ ծնելէն ետք 12 ամսուան ընթացքին այդ երեխայի հետ նոյն վայրի մէջ բնակող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը իրաւունք ունի դիմել միանուագ նպաստ ստանալու համար: Նպաստի չափը կախուած է երեխայի հերթական կարգաթիւէն, այսինքն՝ այն հանգամանքէն, թէ երեխան կը հանդիսանայ դիմումատուի առաջին, երկրորդ, թէ երրորդ երեխան:

7.1.5. Ո՞վ ունի մայրութեան նպաստի իրաւունք

Յղի կինը ունի յղիութեան եւ ծննդաբերութեան արձակուրդի իրաւունք՝ ընդհանուր 140 օր տեւողութեամբ, եւ կրնայ դիմել եւ ստանալ մայրութեան նպաստ:

Պետք է իմանալ, որ այս առաւելութիւնը չի տարածուիր ընտանեկան ձեռնարկատիրութեան վարձու աշխատողի կամ անդամի, ինչպէս նաեւ արտօնագրային հարկ վճարողներու վրայ (մանրամասն տես բաժին Ժ, կետ 2.5 եւ բաժին ԺԱ, կետ 1):

7.1.6. Ո՞վ ունի մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրաւունք

Այս նպաստը կրնան ստանալ երեխայի երկու ծնողներէն մէկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը, եթէ կը գտնուին մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի մէջ:

7.1.7. Ո՞վ ունի ժամանակաւոր անաշխատունակութեան նպաստի իրաւունք

Անձը, որ կ'աշխատի աշխատանքային պայմանագրի հիման վրայ եւ ժամանակաւոր անաշխատունակութեան պատճառով չի ստանար իր աշխատավարձը, իրաւունք ունի ստանալու նպաստ:

Անաշխատունակութեան համար հիմք կրնան ծառայել հիւանդութիւնը, պրոթեզաւորումը, առողջարանային բուժման անհրաժեշտութիւնը, ընտանիքի անդամի հիւանդութիւնը եւ այլն:

7.1.8. Ո՞վ ունի ծերութեան եւ հաշմանդամութեան նպաստի իրաւունք

Ծերութեան նպաստի իրաւունքը կը ծագի 65 տարեկանէն, եթէ անձը չունի կենսաթոշակ ստանալու իրաւունք: Նպաստը կը նշանակուի ցմահ:

Անձը կրնայ ունենալ հաշմանդամութեան նպաստի իրաւունք, եթէ կենսաթոշակ ստանալու իրաւունք չունեցող հաշմանդամ է:

7.1.9. Ո՞վ ունի կերակրողը կորսնցնելու պարագայի նպաստի իրաւունք

Կերակրողը կորսնցնելու նպաստի իրաւունքը կը ծագի, եթէ անձը՝

- 18 տարեկան է կամ անկէ փոքր, կորսնցուցած է կերակրողը եւ չունի որեւէ այլ կենսաթոշակի իրաւունք (նշուած իրաւունքէն, սակայն, անձը կրնայ օգտուիլ մինչեւ 18 տարին լրանալը).
- առկայ համակարգով ցերեկային ուսուցմամբ ուսանող՝ մինչեւ 23 տարին լրանալը.
- Կը հանդիսանայ մահացածի ամուսինը կամ անոր 14 տարին չլրացած երեխայի խնամակալը, չ'աշխատիր եւ զբաղած է երեխայի խնամքով ու կը բնակի անոր հետ նոյն վայրին մէջ:

Պետք է յիշել, որ որդեգրուած երեխաները կ'օգտուին նոյն իրաւունքներէն, ինչ հարազատ երեխաները:

7.1.10. Ո՞վ ունի թաղման նպաստի իրաւունք

Եթէ անձը հոգացած է նպաստ ստացող կամ հաշմանդամութեան նպաստի իրաւունք ունեցող անձի մահուան պարգային անոր յուղարկաւորութեան ծախսերը, ապա ունի թաղման նպաստի իրաւունք՝ պայմանով, որ տուեալ անձը մահացած ըլլայ հաշմանդամութեան վերափորձաքննութեան ժամկետը լրանալէն ետք՝ երեք ամսուան ընթացքին:


8. Զաղաքացիական կացութեան գործերու գրանցում

8.1. Ինչպէ՞ս գրանցել երեխայի ծնունդը

Ծնունդի պետական գրանցումը կ'իրականացնէ քաղաքացիական կացութեան գործերու (ակտերու) գրանցման (ԶԿԱԳ) մարմինը: Անոր համար պէտք է դիմել երեխայի ծնունդի վայրի (համայնքի, Երեւան քաղաքի մէջ՝ վարչական շրջանի) կամ ծնողներու (ծնողներէն մէկուն) բնակութեան վայրի ԶԿԱԳ մարմին կամ ԶԿԱԳ գործակալութեան ամուսնութեան պալատ (հասցէ՝ ՀՀ, ք.Երեւան, Չաքեան փ.3) անկախ երեխայի ծննդեան վայրէն՝ լրացնելով հաստատուած ձեւի յայտարարութիւն:


Անհրաժեշտ է իմանալ, որ յայտարարութիւնը կը ներկայացուի երեխայի ծննդեան օրուընէ առաւելագոյնը մէկ տարուան ընթացքին: Այնուամենայնիւ, ժամկետի շրջանցումը հիմք չէ երեխայի ծնունդի գրանցումը մերժելու համար:

Երեխայի ծնունդի գրանցման համար պէտք է ներկայացնել հետեւեալ փաստաթուղթերը՝



8.2. Ինչպե՞ս գրանցել ամուսնությունը

Ամուսնության պետական գրանցման համար ամուսնացողները ՔԿԱԳ մարմին կը ներկայացնեն **ամուսնության համատեղ գրաւոր դիմում** եւ հետեւեալ փաստաթուղթերը՝



Պետք է իմանալ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ Սուրիոյ կամ մէկ այլ երկրի քաղաքացիներու, քաղաքացիութիւն չունեցող անձերու ամուսնութեան գրանցման վերաբերեալ դիմումները կը ներկայացուին ՀՀ արդարադատութեան նախարարութիւն, որ իր հերթին կը տրամադրէ ամուսնութեան գրանցման մասին թոյլտուութիւն: Այդ նպատակով Սուրիոյ կամ որեւէ այլ երկրի քաղաքացիս պետք է դիմէ իր երկրի համապատասխան մարմիններուն (կամ դեսպանութիւն/հիւպատոսարան) եւ ստանայ տեղեկանք առ այն, որ ինք այդ երկրի մէջ ամուսնացած չէ:

8.3. Ինչպե՞ս կը կատարուի մահուան պետական գրանցումը

Անձի (անկախ քաղաքացիության կամ կարգավիճակի առկայութենէն) մահուան փաստը գրանցելու համար անհրաժեշտ է մահուան օրուընէ եռօրեայ ժամկետի մէջ մահացող անձի վերջին բնակութեան վայրի կամ մահուան վայրի ԶԿԱԳ մարմին ներկայացնել հետեւեալ փաստաթուղթերը՝

- բժշկական կազմակերպութեան կամ բժիշկի տուած՝ **մահը հաստատող փաստաթուղթը** կամ
- անձի մահուան փաստը հաստատող կամ զայն մահացած ճանչնալու մասին դատարանի՝ **օրինական ուժի մէջ մտած վճիռը** (եթէ անձի մահը ճանչցուած է դատարանի որոշմամբ):

Մահուան գրանցման համար սահմանուած ժամկետի շրջանցումը հիմք չէ մահուան գրանցումը մերժելու համար:

8.4. Ինչպե՞ս գրանցել անուան փոփոխումը

Տասնվեց տարին լրացած 33 քաղաքացին իրաւունք ունի փոխելու իր անունը (անուն, ազգանուն եւ/կամ հայրանունը) սեփական դիմումով (16-18 տարեկաններու համար պետք է նաեւ ծնողներու համաձայնութիւն) : Մինչեւ 16 տարեկաններուն համար անուն, ազգանուն կամ հայրանունը կրնայ փոխուիլ անոնց ծնողներու կամ օրինական ներկայացուցիչներու համաձայնութեամբ: Անուան փոխման համար անհրաժեշտ է ԶԿԱԳ մարմին ներկայացնել դիմում, որուն պետք է կցել հետեւեալ փաստաթուղթերը՝

1. դիմողի անձը հաստատող փաստաթուղթը



2. անունը եւ/կամ ազգանունը փոխելու ցանկութիւն ունեցող անձի ծննդեան վկայականը, եթէ անոր մէջ պիտի կատարուին փոփոխութիւններ



3. դիմողի ամուսնութեան վկայականը, եթէ դիմողը ամուսնացած է



4. ամուսնալուծութեան վկայականը, եթէ դիմողը ցանկութիւն ունի վերականգնելու իր մինչ ամուսնական ազգանունը



5. դիմողի անչափահաս երեխաներէն իւրաքանչիւրի ծննդեան վկայականը



Անունը կամ ազգանունը փոխելու համար պետք ըլլալ օրենքով սահմանուած հիմքեր (անունը կամ ազգանունը անբարեհունչ է կամ դժուար արտասանելի, ազգանունը կը փոխուի մէկ ծնողի ազգանունէն միւս ծնողի ազգանուն, անունը տրուած է առանց ծնողներու համաձայնութեան, անձը փաստացի կը կրէ այլ անուն, անունը գրանցուած է թերի (փաղաքշական, կրճատ, փոքրացնող), տոհմական ազգանունը կրելու ցանկութիւն եւ որոշ այլ դէպքեր): Միւս դէպքերուն անուան փոխում կը թոյլատրուի միայն բացառութեան կարգով՝ իւրաքանչիւր պարագային հաշուի առնելով քաղաքացի խնդրանքը հիմնաւորող փաստաթուղթերը:

Անուան եւ/կամ ազգանունան փոխման հիման վրայ անձին կը տրուի անուան փոխման վկայական:

9. Անշարժ գոյքը եւ անոր նկատմամբ իրաւունքի պետական գրանցումը

9.1. Ի՞նչ է անշարժ գոյքը

Անշարժ գոյք կը համարուի այն կառոյցը, զոր անհնար է հողէն անջատել՝ առանց անոր կամ հողամասին վնաս պատճառելու, ինչպէս նաեւ առանց անհնարին դարձնելու անոր նպատակային օգտագործումը: Օրինակ՝ անշարժ գոյք է հողամասը, բնակարանը, տունը, ստորգետնեայ եւ վերգետնեայ այլ շէնքերը եւ այլն:

Հայաստանի մէջ բնակարան եւ բնակելի տուն (կից հողով), ինչպէս նաեւ որեւէ այլ շինութիւն (կից հողով, բացի գիւղատնտեսական հողի) կրնայ ձեռք բերել իւրաքանչիւր անձ՝ անկախ քաղաքացիութենէն եւ կացութեան կարգավիճակէն: Առանձին հողամաս եւ շէնքին կից գիւղատնտեսական հող կրնան ձեռք բերել միայն ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ի մէջ յատուկ կացութեան կարգավիճակ ունեցող անձինք: Այլ անձինք կրնան միայն վարձակալել կամ անհատոյց օգտագործել հող:

Պետք է իմանալ, որ անշարժ գոյքի որեւէ գործարք (առքուվաճառք, վարձակալութիւն եւ այլն) պետք է կնքուի նօտարական կարգով եւ 30 աշխատանքային օրուայ ընթացքին գրանցուի կալուածգրութեամբ (քատասթր):

9.2. Որո՞նք են անշարժ գոյքի ձեռքբերման հետ կապուած վտանգները

Անշարժ գոյք ձեռք բերելու ժամանակ պետք է ուշադրութիւն դարձնել մի քանի հնարաւոր խնդիր յառաջացնող իրավիճակներու, օրինակ՝

- անշարժ գոյքը ունի մի քանի սեփականատէր (օրինակ՝ ամուսինն ու կինը համասեփականատէր են), եւ չկայ անոնցմէ մէկուն համաձայնութիւնը գոյքը վաճառելու համար.
- անշարժ գոյքի նկատմամբ առկայ է ուրիշի գոյքէն սահմանափակ օգտուելու իրաւունք (հարկադիր ծառայութիւն) պահանջելու հնարաւորութիւն (օրինակ՝ յարակից հողամասի սեփականատէրը այդ հողամասով անցնելու իրաւունք կը հայցէ).
- վաճառուած անշարժ գոյքը օրինական սեփականատիրոջ կողմէն ետ պահանջելու հնարաւորութեան առկայութիւն (օրինակ՝ կեղծ լիազօրագրով նոյն գոյքը տարբեր գնորդներուն վաճառելու պարագային օրինական սեփականատէրը կրնայ զայն ետ պահանջել).
- անշարժ գոյքը ծանրաբեռնուած է երրորդ անձերու իրաւունքներով (օրինակ՝ դրամատան մէջ կը հանդիսանայ որպէս գրաւ, յանձնուած է վարձակալութեան կամ այլ պարագաներուն):



9.3. Որո՞նք են անշարժ գոյքի առքուվաճառքի փուլերը

Անշարժ գոյքի առքուվաճառքը տեղի կ'ունենայ հետևեալ փուլերով՝



* (Եթէ պայմանագրի նկատմամբ յատուկ պահանջներ չկան, ապա օրինակելի ձեւի պայմանագիր կարելի է կնքել նաեւ քատասթրի մեջ)

10. Կրթութիւն

10.1. Նախակրթական հաստատութիւններ (մանկապարտեզ)

Երեխան կրնայ յաճախել համայնքային մանկապարտեզ անվճար, իսկ սուրիահայ երեխաները Երեւանի համայնքային (քաղաքապետարանի ենթակայութեան տակ գտնուող) մանկապարտեզներ կ'ընդունուին արտահերթ:

Մանկապարտեզ ընդունուելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝


1. լրացուած դիմում
2. երեխայի ծննդեան վկայականի ու ծնողներու անձը հաստատող փաստաթուղթերու (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի նոյնականացման քարտ) պատճենները
3. երեխայի երկու հատ գունաւոր լուսանկար
4. տեղեկանք ծնողի աշխատանքի վայրէն (եթէ կ'աշխատի)
5. տեղեկանք բնակավայրէն (համատիրութենէ կամ թաղային լիազօրէն)
6. բժշկական տեղեկանք երեխայի առողջութեան մասին



10.2. Դպրոց

Հայաստանի Հանրապետության մեջ 12-ամեայ կրթութիւնը պարտադիր է մինչեւ աշակերտի 19 տարեկան լրանալը: Դպրոցական կրթութիւնը պետական դպրոցներուն մէջ անվճար է բոլոր երեխաներուն համար, ներառեալ ՀՀ քաղաքացի սուրիահայ երեխաներու եւ փախստականի կարգավիճակ ստացած երեխաներու համար: Անվճար դպրոցական կրթութիւնը կը ներառէ նաեւ մինչեւ 4-րդ դասարանի աշակերտները դասագիրքերով անվճար ապահովումը: Գործնականօրէն դպրոցական կրթութիւնը անվճար է բոլոր սուրիահայ երեխաներուն համար:

Դպրոց ընդունուելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝



1. լրացուած դիմում տնօրէնին
2. տեղեկանք երեխայի հաշուառման մասին (առաջին դասարան երթալու պարագային)
3. երեխայի ծննդեան վկայականը կամ անձնագիրը եւ անոնց պատճէնը
4. երեխայի երկու հատ 3x4 չափի գունաւոր լուսանկար
5. Տեղեկանք՝ ընթացիկ գնահատականներու եւ բացակայութիւններու մասին**
6. տեղեկանք երեխայի առողջութեան մասին
7. նախկին դպրոցէն աշակերտի փոխադրման թերթիկը*
8. անձնական գործը*
9. հիմնական կրթութեան վկայականի բնօրինակը (եթէ կ'ընդունուի 10-12-րդ դասարաններ)

* կը ներկայացուին դպրոցի տնօրէնի հաստատումով առաջինէն բարձր դասարաններ ընդունուելու համար, եթէ անոնք առկայ են:

**կը ներկայացուի, եթէ աշակերտը կը տեղափոխուի ուսումնական տարուան ընթացքին մէկ հաստատութենէ միւսը:

Ընդունելութիւնը վերջնականացնելու համար տնօրէնը կ'ընդունի հրաման երեխային դպրոց ընդունելու մասին՝ դիմումի եւ ծնողներու եւ դպրոցի միջեւ կնքուած պայմանագրի հիման վրայ:

Հաշուի առնելով, որ 12-ամեայ կրթութիւնը պարտադիր է, աշակերտը կրնայ 9-րդ դասարանէն ետք ուսումը շարունակել ինչպէս աւագ դպրոցի, այնպէս ալ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական հաստատութիւններէն ներս (օրինակ՝ քոլէճ, ուսումնարան):

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ իւրաքանչիւր պարագային Սուրիայէն եկած աշակերտի դասարանը կ'որոշուի կախուած այնտեղ ստացած կրթութեան ծրագրէն, որուն հետեւանքով երեխան կրնայ ընդունուիլ մէկ դասարան ցած կամ բարձր: Որոշ պարագաներուն ալ գուցէ կարիք ըլլայ գիտելիքի ստուգումներ անցնելու:



10.3. Բարձրագույն ուսումնական հաստատություններ (ԲՈՒՅ-եր)

Բոլոր սուրիահայերը, անկախ ՀՀ քաղաքացի ըլլալու փաստեն, կրնան ՀՀ ԲՈՒՅ-եր ընդունուիլ ընդհանուր հիմունքներով: Անոնց համար կը գործէ անվճար համակարգով ընդունուելու հնարաւորութիւնը (պահանջուող բարձր միաւորներ հաւաքելու կամ յատուկ անվճար տեղի առկայութեան պարագային): Սուրիահայ ուսանողներուն համար հնարաւոր է նաեւ ուսման վարձի փոխհատուցում՝ պետական պիտոճէի ու բարեգործական ծրագրերու ծիրէն ներս:

ԲՈՒՅ ընդունուելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝



1. դիմում՝ նշելով ԲՈՒՅ-ը եւ մասնագիտութիւնը
2. անձը հաստատող փաստաթուղթի (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի նոյնականացման քարտ), ծննդեան վկայականի պատճենը*
3. կրթութեան վկայականի պատճենը* (*եթէ օտար լեզուով է, ապա նօտարական թարգմանութեամբ)
4. տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին
5. տեղեկանք ՁԻԱՀ-ի (AIDS) վերաբերեալ
6. 6 հատ 4x5սմ չափի գունաւոր լուսանկարներ

Կախուած ընտրուած ԲՈՒՅ-էն ընդունելութեան քննութիւնները կը կազմակերպուին հանրապետական մակարդակով միասնական քննութիւն յանձնելու կամ տուեալ ԲՈՒՅ-ի մէջ ընդունելութեան քննութիւններ յանձնելու միջոցով:

11. Ձեռնարկատիրական գործունեութամբ զբաղելու ձեւերը եւ անոնց առանձնայատկութիւնները

11.1. Ի՞նչ է պետք իմանալ նոր պիզնես սկսելէն առաջ

Շատ կարեւոր է ձեռնարկատիրական գործունեութեան իրականացման ձեւի ճիշտ ընտրութիւնը: Ձեռնարկատիրական գործունեութիւն հնարաւոր է իրականացնել որպէս անհատ ձեռնարկատեր հաշուառուելու (որուն պարագային անձը ձեռնարկատիրական գործունեութեան համար պատասխանատուութիւն կը կրէ իր ունեցած ամբողջ գոյքով) կամ իրաւաբանական անձ (որպէս կանոն՝ տնտեսական ընկերութիւն) հիմնադրելու (որուն պարագային ձեռնարկատիրական գործունեութեան համար պատասխանատուութիւնը կը սահմանափակուի ընկերութեան մէջ անձի կատարած ներդրման չափով) միջոցով:

11.2. Ինչպէ՞ս հաշուառուիլ որպէս անհատ ձեռնարկատեր

Ձեռնարկատիրական գործունեութամբ զբաղելու առաւել հեշտ եւ արագ տարբերակը որպէս անհատ ձեռնարկատեր հաշուառուիլն է: Անոր համար անհրաժեշտ է ներկայանալ իրաւաբանական անձերու պետական արձանագրատան (ռեկիսթր) գործակալութիւն եւ ներկայացնել հետեւեալ փաստաթուղթերը՝



1. դիմում
2. անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ (կացութեան քարտ կամ փախստականի անձնագիր կամ նոյնականացման քարտ)
3. պետական տուրքի վճարման անդորրագիր

Անհրաժեշտ է իմանալ, որ օտարերկրեայ քաղաքացիի պարագային անձը հաստատող փաստաթուղթի փոխարեն կը ներկայացուի անոր նօտարական կարգով վաւերացուած հայերէն թարգմանութիւնը:

Ելեկտրոնային ստորագրութիւն ունենալու պարագային գրանցումը ամբողջութեամբ կարելի է կատարել նաեւ www.e-register.am կայքի միջոցով:

Իւրաքանչիւր անձ (ՀՀ քաղաքացի, քաղաքացիութիւն չունեցող անձ, փախստականի կամ կացութեան կարգավիճակ ունեցող անձ) կրնայ հաշուառուիլ որպէս անհատ ձեռնարկատեր:

Անհատ ձեռնարկատերը հաշուառումէն հանելը եւս բաւականին պարզ գործընթաց է, քանի որ չկան լուծարման, իրաւայաջորդութեան հարցեր ու գործընթացներ, ի տարբերութիւն իրաւաբանական անձերու:

Որպէս անհատ ձեռնարկատեր առեւտրային գործունեութեամբ զբաղիլն ունի էական բացասական կողմ՝ անձը իր ամբողջ գոյքով պատասխանատուութիւն կը կրէ որպէս անհատ ձեռնարկատեր իր ստանձնած պարտաւորութիւններուն համար (հաշուառումէն դուրս ելլելը չ'ազատէր պարտաւորութիւններէն):

11.3. Իրաւաբանական անձ ստեղծելու միջոցով պիզնեսի իրականացում

11.3.1. Ինչպէ՞ս գրանցել իրաւաբանական անձ

Իրաւաբանական անձն ստեղծուած կը համարուի պետական գրանցման պահէն: Գրանցման համար ամենաարագ եւ արդիւնաւետ տարբերակն է, երբ տնօրէնը եւ հիմնադիրները անձամբ կը ներկայանան իրաւաբանական անձերու պետական արձանագրատան գործակալութիւն (հասցէ՝ Կոմիտասի պող., 49/3 շէնք)՝ ներկայացնելով իրենց անձնագրերը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, կ'իրականացնէ գրանցումը գործակալութեան տրամադրած օրինակելի փաստաթուղթերը ստորագրելու միջոցով: Օտարերկրեայ քաղաքացիի պարագային անձը հաստատող փաստաթուղթի փոխարեն կը ներկայացուի անոր նօտարական կարգով վաւերացուած հայերէն թարգմանութիւնը:

Իւրաքանչիւր անձ (ՀՀ քաղաքացի, քաղաքացիութիւն չունեցող անձ, փախստականի կամ կացութեան կարգավիճակ ունեցող անձ) իրաւունք ունի Հայաստանի մէջ ստեղծել եւ գրանցել իրաւաբանական անձ եւ իրականացնել համապատասխան գործունեութիւն:




Եթե գրանցուած է բաժնետիրական ընկերութիւն, ապա պետք է արժեթուղթերու պահառութեան պայմանագիրը եւ բաժնետերերու գրանցամատեան վարման պայմանագիրը կնքել հաշուի գործարկուի մօտ՝ գրանցումէն ետք:

11.3.2. Որո՞նք են իրաւաբանական անձերու հիմնական տեսակները

1. շահոյթ հետապնդող (առեւտրային) եւ
2. շահոյթ չհետապնդող (ոչ առեւտրային):

Առեւտրային կազմակերպութիւնները կրնան ստեղծուիլ **տնտեսական ընկերակցութիւններու, ընկերութիւններու կամ առեւտրային գործակցութիւններու** ձեւով: Ոչ առեւտրային կազմակերպութիւնները կրնան ըլլալ հասարակական կազմակերպութիւններու կամ հիմնադրամներու ձեւով:



11.3.2.1. Ի՞նչ է գործակցութիւնը

Գործակցութիւնը կամաւոր միաւորում է, որուն ստեղծման գլխաւոր նպատակը մասնակիցներու նիւթական եւ այլ կարիքները բաւարարելն ու առանձին տնտեսվարողներու ուժերն ու միջոցները միաւորելն է: Անիկա առաւելապէս տարածուած է գիւղատնտեսութեան ոլորտէն ներս:

Գործակցութեան անդամ կրնան ըլլալ քաղաքացիները եւ իրաւաբանական անձերը՝ միաւորելով իրենց բաժնեվճարները:

Պետք է իմանալ, որ գործակցութիւն չի կրնար ստեղծուիլ 5 հոգիէ պակաս կազմով, եւ որ մասնակիցները պարտաւոր են լրացուցիչ վճարներու միջոցով փակել գործակցութեան վնասները:

11.3.2.2. Ի՞նչ է լիակատար ընկերակցութիւնը

Լիակատար ընկերակցութեան մասնակիցները (լիակատար ընկերներ) ընկերակցութեան անունով կը զբաղին ձեռնարկատիրական գործունէութեամբ եւ իրենց պատկանող գոյքով պատասխանատուութիւն կը կրեն ընկերութեան պարտաւորութիւններուն համար:

Լիակատար ընկերներ կրնան ըլլալ միայն **անհատ ձեռնարկատէրերը** եւ (կամ) **առեւտրային կազմակերպութիւնները**, ինչը կը դժուարացնէ այս իրաւաբանական անձի ստեղծումը, քանի որ նախ պետք է ստեղծել մէկ այլ իրաւաբանական անձ կամ հաշուառուիլ իբրեւ անհատ ձեռնարկատէր, որպէսզի հնարաւոր ըլլայ դառնալ լիակատար ընկեր:

11.3.2.3. Ի՞նչ է վստահութեան վրայ հիմնուած ընկերակցութիւնը

Վստահութեան վրայ հիմնուած ընկերակցութիւնը (աւանդատնային ընկերակցութիւն) բաղկացած է **մէկ կողմէն լիակատար ընկերներէ**, որոնք իրենց ամբողջ գոյքով պատասխանատուութիւն կը կրեն ընկերակցութեան պարտաւորութիւններուն համար, եւ **միւս կողմէն՝ աւանդատուներէն**, ովքեր պատասխանատուութիւն կը կրեն միայն իրենց ներդրած գոյքի/դրամի սահմաններուն մէջ եւ իրաւունք չունին մասնակցելու ընկերակցութեան կառավարման:



11.3.2.4. Ի՞նչ է սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերությունը

Սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերությունը (ՍՊԸ) կը ստեղծուի մեկ կամ մի քանի անձերու կողմէն: ՍՊԸ-ի կանոնադրական դրամագլուխը բաժնուած է բաժնեմասերու: ՍՊԸ-ն պատասխանատուութիւն կը կրէ իր պարտաւորութիւններուն համար միայն իր գոյքով, ինչը կը նշանակէ, որ ՍՊԸ-ի մասնակիցները պատասխանատուութիւն չեն կրեր ՍՊԸ-ի պարտաւորութիւններուն համար:

11.3.2.5. Ի՞նչ է լրացուցիչ պատասխանատուութեամբ ընկերությունը

Լրացուցիչ պատասխանատուութեամբ ընկերությունը ընդհանուր առմամբ նման է ՍՊԸ-ին, սակայն ի տարբերութիւն ՍՊԸ-ի, այս պարագային ընկերութեան իրաքանչիւր մասնակից ընկերութեան պարտաւորութիւններուն համար լրացուցիչ պատասխանատուութիւն կը կրէ իր սեփական գոյքով: Լրացուցիչ պատասխանատուութեան չափը որոշելու համար իրաքանչիւր մասնակիցի ներդրածը կը բազմապատկուի կանոնադրութեամբ նախապէս որոշուած թիւով: Այսինքն, եթէ անձը ներդրած է 1000 դրամ, եւ կանոնադրութեամբ սահմանուած է, որ մասնակիցը կը կրէ ներդրածի հնգապատիկի չափով լրացուցիչ պատասխանատուութիւն, ապա անձի պատասխանատուութեան չափը կ'ըլլայ 5000 դրամ:

11.3.2.6. Ի՞նչ է բաժնետիրական ընկերությունը

Բաժնետիրական ընկերութեան կանոնադրական դրամագլուխի մէջ ներդրում կատարելով՝ անձը ձեռք կը բերէ բաժնետոմսեր, որոնք անոր կու տան շահութաբաժիններ ստանալու եւ ընկերութեան կառավարման մասնակցելու իրաւունք, բացառութեամբ առանձին տեսակի բաժնետոմսերու, որոնք սեփականատիրոջ ընկերութեան կառավարման մասնակցելու իրաւունք չեն վերապահեր:

Բաժնետիրական ընկերութիւնները կ'ըլլան փակ (ՓԲԸ) եւ բաց (ԲԲԸ)՝ կախուած բաժնետոմսերու առաւելագոյն քանակէն եւ ազատ վաճառքի հնարաւորութենէն: Եթէ ՓԲԸ-ի բոլոր բաժնետոմսերը կը բաշխուին հիմնադիրներուն միջեւ եւ չեն կրնար ազատ վաճառքի դրուիլ (մեկ մասնակիցի բաժնետոմսերու վաճառքի պարագային անհրաժեշտ է միւսներուն համաձայնութիւնը), ապա ԲԲԸ-ի բաժնետոմսերը ազատ շրջանառուող են եւ կրնան ձեռք բերուիլ ոեւէ անձի կողմէն՝ առանց լրացուցիչ համաձայնութեան:

Պէտք է յիշել, որ ՓԲԸ-ն կրնայ ունենալ 49-էն ոչ աւել բաժնետեր, այլապէս պէտք է վերակազմակերպուի ԲԲԸ-ի:


11.4. Որո՞նք են ՍՊԸ-ի ու ՓԲԸ-ի ընդհանրություններն ու տարբերությունները



ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- հիմնադիրը ≥ 1 անձ է
- մասնակից կամ բաժնետեր ≤ 49 հոգի
- Մասնակիցներու ու բաժնետերերու անձնական գոյքով պատասխանատուութիւն ՉԿԱ:

ԱՌԱՋՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ



11.5. Իրաւաբանական անձի վերակազմակերպում

11.5.1. Ի՞նչ է իրաւաբանական անձի վերակազմակերպումը

Իրաւաբանական անձերու վերակազմակերպումը կրնայ տեղի ունենալ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման ու վերակազմաւորման ձեւով:

11.5.2. Ի՞նչ կարգով կ'իրականացուի իրաւաբանական անձի վերակազմակերպումը

Որպէս կանոն, իրաւաբանական անձերու վերակազմակերպումը կ'իրականացուի **կամաւոր՝** հետեւեալ պատճառներով.

- անհրաժեշտ է բարձրացնել իրաւաբանական անձի կառաւարման համակարգի արդիւնաւետութիւնը.
- պիզնեսին անհրաժեշտ են նոր ակտիւներ.
- ակտիւներու միաւորումը կ'ապահովէ առաւել լաւ արդիւնքներ պիզնեսի համար:

Իրաւաբանական անձերու վերակազմակերպումը կրնայ իրականացուիլ նաեւ **հարկադիր** կարգով՝ դատարանի վճիռի հիման վրայ ազատ տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան նպատակով: Անիկա, որպէս կանոն, կը վերաբերի առաւել խոշոր պիզնեսներուն:

11.5.3. Որո՞նք են վերակազմակերպման ձեւերը

11.5.3.1. Ի՞նչ է միաձուլումը

Միաձուլման արդիւնքով երկու կամ ւելի իրաւաբանական անձերէ կը ստեղծուի նոր իրաւաբանական անձ, որուն կը փոխանցուին այդ իրաւաբանական անձերու իրաւունքներն ու պարտականութիւնները: Միաձուլման արդիւնքով միաձուլուած իրաւաբանական անձերու գործունեութիւնը կը դադրի:

11.5.3.2. Ի՞նչ է բաժանումը

Արդեն գոյություն ունեցող իրաւաբանական անձը կը բաժնուի երկու կամ ավելի նոր իրաւաբանական անձերու, ինչի արդիւնքով առաջինի գոյութիւնը կը դադրի, իսկ անոր իրաւունքներն ու պարտականութիւնները նախապէս որոշուած ծաւալներով կը փոխանցուին նոր իրաւաբանական անձերու:

11.5.3.3. Ի՞նչ է միացումը

Միացման արդիւնքով մէկ կամ մի քանի կազմակերպութիւն կը միանան մէկ այլ կազմակերպութեան՝ վերջինիս փոխանցելով իրենց բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները:

Միացման արդիւնքով կը դադրին միացող իրաւաբանական անձի կամ անձերու գործունէութիւնը:

11.5.3.4. Ի՞նչ է առանձնացումը

Արդէն գոյութիւն ունեցող իրաւաբանական անձէն (որուն գոյութիւնը կը շարունակուի) կ'առանձնացնեն մէկ կամ մի քանի նոր իրաւաբանական անձեր, որոնց կը փոխանցուին վերակազմակերպուող իրաւաբանական անձի որոշ իրաւունքներն ու պարտականութիւնները:

11.5.3.5. Ի՞նչ է վերակազմաւորումը

Վերակազմաւորման պարագային նախկին ձեւով գործող իրաւաբանական անձի գոյութիւնը կը դադրեցուի եւ կը ստեղծուի նոր ձեւով իրաւաբանական անձ, որուն կը փոխանցուին նախորդի բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները: Օրինակ՝ սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութիւնը կրնայ վերակազմաւորուիլ բաժնետիրական ընկերութեան կամ առեւտրային գործակցութեան եւ հակառակը:



11.5.4. Ի՞նչ ընթացակարգով կ'իրականացուի վերակազմակերպումը

Վերակազմակերպման ընթացքին հաշուապահական հաշուառման եւ հաշուետուութիւններու տուեալներուն արժանահաւատութիւնը ապահովելու նպատակով պարտադիր է ընկերութեան մէջ իրականացնել ակտիւներու եւ պարտաւորութիւններու գոյքագրում:

Եթէ միացման արդիւնքով ընկերութիւնը շուկայի մէջ ձեռք կը բերէ գերիշխող դիրք, ապա միաձուլման կամ միացման համար անհրաժեշտ է լիազօրուած պետական մարմնի թոյլտուութիւնը:

Վերակազմակերպման փուլերն են՝



12. Հարկումը Հայաստանի Հանրապետության մեջ

12.1. Հարկման ինչպիսի՞ համակարգեր կան Հայաստանի մեջ

Հայաստանի Հանրապետության մեջ կը գործեն հարկման **ընդհանուր** եւ **յատուկ** համակարգեր:

Հարկման ընդհանուր համակարգին մեջ պիզնեսը կը վճարե աւելցուած արժեքի հարկ (ԱԱՀ) եւ շահութահարկ, երբեմն՝ նաեւ այլ հարկեր (մաքսային հարկ, բնապահպանական հարկ, ճանապարհային հարկ եւ այլն): Գրեթէ որեւէ պիզնես կրնայ օգտուիլ հարկման ընդհանուր համակարգէն:

Հարկման յատուկ համակարգի մեջ պիզնեսը չի վճարուիր ԱԱՀ եւ շահութահարկ՝ փոխարէնը վճարելով տուեալ համակարգի համար նախատեսուած հարկերը: Այդպիսիք են՝

- շրջանառութեան հարկը,
- արտօնագրային հարկը:

Կայ նաեւ ընտանեկան ձեռնարկատիրութեան համակարգ, որուն ծիրէն ներս ընտանեկան պիզնեսը ազատ է գրեթէ բոլոր հարկերէն (տես՝ «Ընտանեկան ձեռնարկատիրութիւն» բաժին):

Հարկման յատուկ համակարգէն օգտուելու համար կան որոշ սահմանափակումներ, որոնք ներկայացուած են ստորեւ

12.2. Որո՞նք են պիզնեսի կողմէն վճարուող հարկերը

12.2.1. Աւելցուած արժեքի հարկ (ԱԱՀ)

Աւելցուած արժեքի հարկը (յետայսու՝ ԱԱՀ) ապրանքներու եւ ոչ նիւթական ակտիւներու վաճառքի ու վարձակալութեան, աշխատանքներու կատարման, ծառայութիւններու մատուցման գործարքներու կնքման արդիւնքով պետական պիւտճէ վճարուող հարկ է:

ԱԱՀ դրոյքաչափը իւրաքանչիւր գործարքի գումարի 20 տոկոսն է, որ կը հաշուարկուի ու կը վճարուի ամսական կարգով:

Հիմնականօրէն ձեռքբերման ու իրացման գործարքներու ԱԱՀ-ն կարելի է հաշուանցել (օրինակ՝ եթէ ապրանքը, որ ձեռք բերուած է այլ ԱԱՀ վճարողէն, կը վերավաճառուի, գնման գինի մէջ մտած ԱԱՀ-ն կը հաշուանցուի վաճառքի գինի ԱԱՀ-ի հետ, ու կը վճարուի վաճառքի ԱԱՀ-ի եւ ձեռք բերման ԱԱՀ-ի դրական տարբերութեան չափով ԱԱՀ):



Որոշ ապրանքներ ու գործարքներ ազատած են ԱԱՀ-էն:

12.2.2. Շահութահարկ

Շահութահարկը պիզնեսի համախառն եկամուտէն (հասոյթէն) պետական պիւտճէ վճարուող հարկ է: Շահութահարկի դրոյքաչափը 20 տոկոս է: Շահութահարկի հարկման հիմքը որոշելու համար հասոյթէն կը նուազեցուին հիմնաւորուած ձեռնարկատիրական ծախսերը, կորուստները եւ այլ նուազեցումները: Որոշ ծախսեր չեն նուազեցուիր, իսկ որոշ ծախսերու նուազեցման վրայ կը կիրառուին սահմանափակումներ: Շահութահարկը կը վճարուի տարեկան կտրուածքով, սակայն նաեւ անհրաժեշտ է վճարել եռամսեակային կանխավճարներ:

12.2.3. Մաքսային հարկ

Մաքսային հարկով կը հարկուին արտադրողի կողմէն ՀՀ-ի մէջ հետեւեալ ապրանքներուն վաճառքը կամ ՀՀ անոնց ներմուծումը՝

- ոգելից ըմպելիներու արտադրանք.
- ծխախոտի արտադրանք.
- քսաիւղ.
- պէնզին, դիզելային վառելիք, քարիւղէն պատրաստուող արտադրանք.
- ճնշակայանի մէջ վաճառուող բնական կազ:

Մաքսային հարկի դրոյքաչափի մեծութիւնը կախուած է հարկուող ապրանքի տեսակէն:

12.2.4. Շրջանառութեան հարկ

Ասիկա կը փոխարինէ ԱԱՀ-ին եւ շահութահարկին, ու այդ հարկային համակարգէն օգտուելու համար պետք է ամէն տարի մինչեւ Փետրուար 20-ը հարկային մարմին ներկայացնել համապատասխան յայտարարութիւն: Ասիկա կը վճարուի ամբողջ շրջանառութենէն, կը հաշուարկուի ու կը վճարուի եռամսեակային կարգով: Որոշ դէպքերուն (օրինակ՝ հանրային սնունդի ոլորտէն ներս) կը թոյլատրուին ծախսերու նուազեցումներ:

Դրոյքաչափը կը տատանուի ըստ գործունեութեան տեսակի. առեւտուրի ու ծառայութիւններու ոլորտէն ներս ասիկա կը կազմէ 5%, արտադրութեան մէջ՝ 3.5%, վարձակալութենէն ու շոյալթիներէն՝ 10%, հանրային սնունդի ոլորտին մէջ՝ 6% եւ այլն :

Վճարող կրնայ ըլլալ պիզնետը, որուն տարեկան շրջանառութիւնը նախորդ ու ընթացիկ տարուան ընթացքին չէ գերազանցած 115 միլիոն դրամը:

Այս եղանակէն չեն կրնար օգտուիլ մաքսային հարկ վճարողները, ֆինանսական ոլորտի կազմակերպութիւնները, իրարու հետ փոխկապակցուած պիզնետները: Առկայ են որոշ այլ տեխնիկական բացառութիւններ:

12.2.5. Արտօնագրային հարկ

Արտօնագրային հարկ կը վճարուի գործունեութեան հետեւեալ տեսակներուն համար՝

- թեթեւ մարդատար մեքենայով, հանրակառքով եւ (կամ) փոքր հանրակառքով ուղեւորափոխադրում.
- վարսավիրական ծառայութիւններու մատուցման գործունեութիւն.
- մեքենագործութեան կայաններու (կէտերու) գործունեութիւն.
- մեքենաներու կանգառներու գործունեութիւն.
- պիլիարտ խաղի կազմակերպում.
- սեղանի թենիս խաղի կազմակերպում.
- մետաղադրամով եւ (կամ) թղթադրամով շահագործուող ինքնաշխատներու միջոցով սնունդի առետուրի, ինչպէս նաեւ մետաղադրամով շահագործուող ինքնաշխատներու միջոցով խաղերու (բացառութեամբ շահումով խաղերու եւ խաղատուներու գործունեութեան) կազմակերպում.
- ատամնաբուժական եւ ատամնատեխնիկական գործունեութիւն.
- տոտալիզատորի եւ ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում.
- առետուրի իրականացման վայրերու մէջ (ոսկիի շուկաներու մէջ) վաճառասեղաններու կամ վաճառակէտերու միջոցով թանկարժէք մետաղներու, թանկարժէք մետաղներէն պատրաստուած իրերու կամ թանկարժէք քարերու առք ու վաճառքի գործունեութիւն:

Արտօնագրային հարկը կը վճարուի ամսական կտրուածքով, իսկ դրոյքաչափի մեծութիւնը կախուած է գործունեութեան տեսակէն:

Արտօնագրային հարկով հարկուելու համար անհրաժեշտ է նախքան գործունեութիւն սկսիլը, սակայն ոչ ուշ, քան նախորդ օրը, հարկային մարմին ներկայացնել յայտարարութիւն:

12.3. Որո՞նք են պիզնետի ու անհատներու կողմէն վճարուող հարկերը

12.3.1. Եկամտային հարկ

Եկամտային հարկը կը հաշուարկուի եւ կը վճարուի անհատի կողմէն ստացուած համախառն եկամուտէն: Պիզնետը պէտք է հաշուարկէ ու վճարէ իր աշխատողներու եւ իրեն ծառայութիւն մատուցող ֆիզիքական անձերու եկամտային հարկը:

Հարկման հիմքի նկատմամբ եկամտային հարկը կը հաշուուի հետեւեալ դրոյքաչափերով (ուժի մէջ է 2020 թուականի Յունուարի 1-էն).

Ժամանակահատուած	Եկամտային հարկի դրոյքաչափը
2020 թուականի Յունուար 1-էն	23 տոկոս
2021 թուականի Յունուար 1-էն	22 տոկոս
2022 թուականի Յունուար 1-էն	21 տոկոս
2023 թուականի Յունուար 1-էն	20 տոկոս

Այլ եկամուտներու համար դրոյքաչափերն են՝

Եկամուտի տեսակը	Եկամտային հարկի դրոյքաչափը
Տոկոսներ	10 տոկոս
Ռոյալթիներ	10 տոկոս
Վարձակալական վճարներ	10 տոկոս
Ձեռնարկատիրական գոյքի վաճառք	10 տոկոս
Շահաբաժիններ	5 տոկոս

Եկամտային հարկը կը հաշուուի եւ կը վճարուի ամսական կտրուածքով:

12.3.2. Անշարժ գոյքի հարկ

Անշարժ գոյքի հարկով կը հարկուին հողամասերը, անհատական բնակելի տուները, բնակարանները, կառատունները, հասարակական եւ արտադրական նշանակութեան շինութիւնները:

Հարկի դրոյքաչափի մեծութիւնը կախուած է գոյքի տեսակէն եւ գատասդրային արժեքէն, իսկ վճարումը կը կատարուի տարեկան կտրուածքով:

12.3.3. Փոխադրամիջոցներու գոյքահարկ

Այս հարկով հարկման ենթակայ են ինքնաշարժները, ջրային փոխադրամիջոցները (շարժիչով աշխատող), հրանիւները, ձիւնագնացը եւ քառանիւ հեծանիւները (quadracycle):

Փոխադրամիջոցի գոյքահարկի չափը կ'որոշուի տուեալ փոխադրամիջոցի շարժիչի հզօրութեան համեմատ: Այս հարկը կը վճարուի տարեկան կտրուածքով:

12.4. Ինչպիսի՞ հարկային արտօնութիւններ կը գործեն Հայաստանի մէջ

Բացի փոքր եւ միջին պիզնեսի համար հարկային արտօնութիւններէն (տես՝ «Փոքր եւ միջին ձեռնարկատիրութիւններու (ՓՄՁ) համար հարկային արտօնութիւններու հնարաւորութիւններ»), 2018 թուականի Յունուարէն Հայաստանի մէջ կը գործեն միայն հետեւեալ հարկային արտօնութիւնները՝

- ԱԱՀ վճարումը կը յետաձգուի 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան որոշմամբ ընտրուած կազմակերպութիւններու եւ անհատ ձեռնարկատէրերու կողմէն ներդրումային ծրագրերու ծիրէն ներս ապրանքներու ներմուծման պարագային:
- Ձեռագործ գորգերու արտադրութեամբ զբաղող շահութահարկ վճարողները կ'ազատին շահութահարկի վճարումէն:
- ՀՀ կառավարութեան հաւանութեան արժանացած գործարար ծրագիր իրականացնող պիզնեսները (բացառութեամբ առետուրի կամ ֆինանսական ոլորտէն ներս գործունէութիւն իրականացնող ռեզիդէնտի) երկու տարուան ընթացքին շահութահարկի գումարէն կրկան նուազեցնել իրենց կողմէն վճարուող լրացուցիչ աշխատավարձերու գումարները, բայց ոչ աւելի, քան վճարուելիք շահութահարկի գումարի 30 տոկոսը՝ ըստ կառավարութեան որոշման:



- ՀՀ կառավարության հաւանութեան արժանացած արտահանման խոշոր ծրագիր իրականացնողներուն համար (Հայաստանէն դուրս որոշակի աշխատանքներու կատարման կամ Հայաստանէն դուրս ապրանքներու մատակարարման գործունեութեան համար, բացառութեամբ օգտակար հանածոներու, թանկարժէք մետաղներու եւ քարերու, ինչպէս նաեւ անոնց արտադրանքի, մաքսային հարկով հարկուող ապրանքներու) շահութահարկի դրոյքաչափը կը կազմէ 5% առնուազն 40 միլիառ դրամ արտահանման պարագային, 2%՝ առնուազն 50 միլիառ դրամ արտահանման պարագային:
- Հայաստանի սահմանամերձ գօտիներու մէջ գործունեութիւնը ազատ է ԱԱՀ-էն եւ շահութահարկէն:
- Տաւուշի մարզի Դիլիջան համայնքի մէջ առնուազն 2 միլիառ դրամի ներդրմամբ ծրագրերու իրականացման ծիրէն ներս գործունեութիւնը ազատ է ԱԱՀ-էն եւ շահութահարկէն:
- Հայաստանի ազատ տնտեսական գօտիներու մէջ գործունեութիւն իրականացնող պիզնեսները ազատ են շահութահարկի, աւելցուած արժէքի հարկի, գոյքահարկի եւ մաքսատուրքի վճարման պարտաւորութիւններէն:

13. Փոքր եւ միջին ձեռնարկատիրութիւններու (ՓՄՁ) համար հարկային արտօնութիւններու հնարաւորութիւններ

13.1. Միկրոձեռնարկատիրութիւն (Ուժի մէջ է 2020 թուականի Յունուար 1-էն)

13.1.1. Ի՞նչ հարկային արտօնութիւններ կը տրուին միկրոձեռնարկութիւններուն

Միկրոձեռնարկատիրութեան տեր ճանչցուած անհատ ձեռնարկատերերն ու իրաւաբանական անձինք ազատ են ձեռնարկատիրութեան համար յառաջացող բոլոր հարկերէն (աւելցուած արժէքի հարկ, շահութահարկ եւ այլն), ինչպէս նաեւ հարկային գործակալին բնորոշ պարտաւորութիւններէն, ինչպիսիք են՝ հարկը հաշուելու, գայն պահելու եւ պետական պիւտճէ փոխանցելու պարտաւորութիւնները:

Միկրոձեռնարկատիրութեան մէջ ներգրաւուած իւրաքանչիւր վարձու աշխատողի համար կը վճարուի ամսական 5000 դրամի չափով եկամտային հարկ:

Միկրոձեռնարկատիրութեան տերը չ'ազատիր մաքսային հարկի, բնապահպանական հարկի եւ (կամ) ճանապարհային հարկի հաշուարկման եւ պետական պիւտճէ վճարման պարտաւորութենէն:

13.1.2. Այլ առաելութիւններ

Միկրոձեռնարկատիրութեան տերը կը ներկայացնէ միայն հետեւեալ հարկային հաշուետութիւնները՝

- տարեկան հաշուետութիւն շրջանառութեան վերաբերեալ (տարեկան մէկ անգամ՝ մինչեւ յաջորդ տարուայ Փետրուար 1-ը).
- աշխատողներուն վճարուած եկամուտներու եւ եկամտային հարկի վերաբերեալ ամսական հաշուետութիւն (ամսական մէկ անգամ՝ մինչեւ յաջորդ ամսուայ 20-ը):

13.1.3. Ո՞վ կրնայ ըլլալ միկրոձեռնարկատիրութեան տեր

Միկրոձեռնարկատիրութեան տեր կրնայ ըլլալ՝

- համարուիլ այն լիազօր ներկայացուցիչ առեւտրային կազմակերպութիւնը եւ անհատ ձեռնարկատերը, որուն նախորդ հարկային տարուայ ընթացքին գործունէութեան բոլոր տեսակներու իրացման շրջանառութիւնը չէ գերազանցած 24 միլիոն դրամը,
- անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիքական անձը, որուն նախորդ հարկային տարուայ ընթացքին սահմանուած գործունէութեան բոլոր տեսակներու իրացման շրջանառութիւնը չէ գերազանցած 24 միլիոն դրամը:

13.1.4. Ովքե՞ր չեն կրնար համարուիլ միկրոձեռնարկատիրութեան տերեր

Միկրոձեռնարկատիրութեան տերեր չեն կրնար համարուիլ՝

- դրամատուները, վարկային կազմակերպութիւնները, ապահովագրական ընկերութիւնները, ներդրումային ընկերութիւնները, արժեթուղթերու շուկայի մասնագիտացուած մասնակիցները, գրաւատուները, արտարժոյթի առք ու վաճառքի, արտարժոյթի առեւտրական-միջնորդային առք ու վաճառքի գործունէութիւն իրականացնողները, ներդրումային հիմնադրամները, հիմնադրամներու կառավարիչները, վճարահաշուարկային կազմակերպութիւնները, նոտարները, խաղատուներու, շահումով խաղերու կամ վիճակախաղերու կազմակերպման գործունէութիւն իրականացնողները.
- խորհրդատուական, իրաւաբանական, հաշուապահական, հաշուեքննական, ճարտարագիտական, գովազդային, ձեւաւորման, շուկայականութեան, թարգմանչական, փորձագիտական, բժշկական, ատմանաբուժական ծառայութիւններ, տեղեկատուութեան մշակման (ներառեալ՝ տեղեկատուութեան հաւաքման ու ընդհանրացման) եւ փոխանցման (հաղորդման), գիտահետազօտական, փորձարարական-շինարարական եւ փորձարարական-գիտարուեստական (գիտարուեստական) աշխատանքներ,



ինչպես նաև սոյն ենթակետի մեջ նշուած ծառայութիւններուն համանման այլ ծառայութիւններ մատուցողները.

- Երեւան քաղաքի վարչական սահմաններէն ներս առետրական (առք ու վաճառքի) գործունեութեամբ զբաղող կազմակերպութիւններն ու անհատ ձեռնարկատէրերը, Երեւան քաղաքի վարչական սահմաններէն դուրս՝ առետուրի իրականացման վայրերու մէջ, առետուրի կեդրոններու մէջ եւ տօնավաճառներու մէջ առետրական (առք ու վաճառքի) գործունեութեամբ զբաղող կազմակերպութիւններն ու անհատ ձեռնարկատէրերը, ինչպէս նաև անձնական օգտագործման ինքնաշարժներու առետրական (առք ու վաճառքի) գործունեութեամբ կամ էլեկտրոնային առետուրի շրջանակէն ներս առետրական (առք ու վաճառքի) գործունեութեամբ զբաղող կազմակերպութիւններն ու անհատ ձեռնարկատէրերը.
- հարկային տարուայ ընթացքին հսկիչ դրամարկղային մեքենաներու շահագործման կանոններու երրորդ խախտումը կատարած կազմակերպութիւնները եւ անհատ ձեռնարկատէրերը՝ խախտումն արձանագրելու օրէն մինչեւ այդ օրը ներառող հարկային տարուան յաջորդող հարկային տարուայ աւարտը.
- փոխկապակցուած համարուող կազմակերպութիւնները եւ ֆիզիքական անձինք, բացառութեամբ այն դէպքերու, երբ, անոնց փոխկապակցուած կազմակերպութիւնները եւ (կամ) ֆիզիքական անձինք հարկային մարմին ներկայացուցած են գործունեութիւնը դադրեցնելու մասին յայտարարութիւն եւ յայտարարութիւնը ներկայացնելու օրէն ետք, իսկ յայտարարութեան մէջ գործունեութիւնը դադրեցնելու այլ օր նշելու պարագային՝ այդ օրէն ետք փաստացի գործունեութիւն չեն իրականացուցած.
- փոխկապակցուած համարուող կազմակերպութիւնները եւ ֆիզիքական անձինք, եթէ հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցուած ճանչցուած առետրային կազմակերպութիւններու եւ ֆիզիքական անձերու նախորդ հարկային տարուայ կամ ընթացիկ հարկային տարուայ ընթացքին գործունեութեան բոլոր տեսակներու համար իրացման շրջանառութիւններու հանրագումարը կը գերազանցէ 24 միլիոն դրամը.
- համատեղ գործունեութեան պայմանագրի, ինչպէս նաև ապրանքներու մատակարարման՝ յանձնակատարի կամ ապրանքներու մատակարարման՝ գործակալի անունէն հանդէս գալու պայման նախատեսող գործակալութեան պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպութիւնները եւ ֆիզիքական անձինք.
- իրենց գործունեութեան ընթացքին անհատ ձեռնարկատէր չհանդիսացող այլ ֆիզիքական անձերու աշխատանքը օգտագործող անհատ ձեռնարկատէր չհանդիսացող ֆիզիքական անձինք.
- կազմակերպութիւններուն կամ անհատ ձեռնարկատէրերուն ապրանքներու մատակարարման գործարքներ իրականացուցած՝ առետրական (առք ու վաճառքի) գործունեութեամբ զբաղող կազմակերպութիւններն ու անհատ ձեռնարկատէրերը:

13.1.5. Գործունեության ո՞ր տեսակներու համար է սահմանուած հարկային արտօնութիւն

Արտօնութիւնը կը տարածուի բնակչութեան պատուերով կատարուող գործունեութեան հետեւեալ տեսակներու վրայ՝

- կօշիկի եւ կաշուէ օրացոյցային եւ համանման այլ արտադրատեսակներու արտադրութիւն, կօշիկի եւ կաշուէ օրացոյցային պարագաներու արտադրութիւն, կօշիկի եւ կաշուէ արտադրատեսակներու նորոգում,
- հագուստի, գլխարկներու, գորգերու եւ գորգագործական արտադրատեսակներու, ոչ թանկարժէք զարդերու արտադրութիւն ու նորոգում,
- փայտեայ իրերու պատրաստում, կահոյքի եւ տան կահոյքի նորոգում,
- համակարգչային ու կենցաղային սարքերու նորոգում, ծրագրային սպասարկում,
- հեծանիւներու եւ հաշմանդամներու սայլակներու արտադրութիւն, անձնական օգտագործման եւ կենցաղային այլ արտադրատեսակներու նորոգում,
- տնտեսական եւ գեղագարդ խեցեգործական արտադրատեսակներու, այլ ճենապակէ եւ խեցեգործական արտադրատեսակներու արտադրութիւն, թիթեղագործական գործունեութիւն,
- ժամացոյցներու, ժամանակաչափ սարքերու նորոգում, երաժշտական գործիքներու նորոգում,
- մասնաւոր տնային տնտեսութիւններէն ներս ծառայութիւններու մատուցում,
- նեղ մասնագիտական գիտելիքներու ձեռքբերման այլ դասընթացներ, լեզուներու ուսուցման, բարձրագոյն եւ այլ հաստատութիւններ ընդունուելու համար նախապատրաստական դասընթացներ,
- պարերու, երգեցողութեան դասաւանդում,
- կատարողական արուեստի բնագաւառէն ներս գործունեութիւն, կատարողական արուեստի բնագաւառէն ներս օժանդակ գործունեութիւն,
- ստեղծագործական գործունեութիւն, խրախճանք վարողներու գործունեութիւն,
- կրթական գործունեութիւն եւ արտադպրոցական դաստիարակութիւն մարմնամարզութեան եւ մարմնամարզութեան բնագաւառէն ներս,
- դարբնոցային գործունեութիւն,
- զբօսաշրջային տուներու միջոցով հիւրանոցային ծառայութիւններու մատուցում:

13.1.6. Ինչպե՞ս ստանալ հարկային արտօնությունը

Արտօնություն ստանալու համար հաշուառման վայրի հարկային մարմին պետք է ներկայացնել՝

- դիմում (ձեռք կայ հարկային մարմիններու մեջ).
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի համաձայնեցուած ճամբորդական փաստաթուղթ) ու անոր պատճենը,
- անհատ ձեռնարկատիրոջ պարագային՝ նաեւ գրանցման վկայականն ու անոր պատճենը:

Չարկերէն ազատման արտօնագիր կը տրամադրուի դիմումի օրուան յաջորդող մէկ աշխատանքային օրուայ ընթացքին:

13.1.7. Ի՞նչ պետք է յիշել դիմումը լրացնելու ժամանակ

Դիմումը լրացնելու ժամանակ պետք է ճիշդ նշել՝

- գործունեութիւնը իրականացնելու ճշգրիտ ժամանակահատուածը: Արտօնութիւնը կը սկսի գործել դիմումի ներկայացման ամիսէն **մինչեւ դիմումի մէջ նշուած ժամանակահատուածի աւարտը:**
- գործունեութեան այն տեսակը կամ տեսակները, զոր (զորս) անձը կ'իրականացնէ կամ կ'ուզէ իրականացնել: Դիմումին մէջ չնշուած գործունեութեան **արտօնութիւնը չի գործեր:**
- գործունեութեան իրականացման վայրը (հասցէն), բացառութեամբ գործունեութեան այն տեսակներուն, որոնք իրենց բնոյթով չունին իրականացման մշտական վայր:

13.2. Ինքնագբաղ անձինք

13.2.1. Ի՞նչ հարկային արտօնություն կը տրուի ինքնագբաղ անձին

Եթե ինքնագբաղ անձը ստացած է հարկերեն ազատ ըլլալու արտօնագիր, ապա այդ գործունեութեան տեսակներու համար կ'ազատի պետական պիտոճէ վճարուող հարկերեն (եկամտային հարկ, աւելցուած արժեքի հարկ եւ այլն):

Անձը չ'ազատիր անշարժ գոյքի հարկեն, փոխադրամիջոցներու գոյքահարկեն, գոյքահարկեն ու հողի հարկեն, ինչպէս նաեւ ներմուծուող ապրանքներու համար գանձուող աւելցուած արժեքի հարկեն ու մաքսատուրքերեն:

Երբ անձը ստացած է հարկերեն ազատ ըլլալու արտօնություն, չի հանդիսանար հարկային գործակալ, կրնայ դուրս չգրել հարկային հաշիւներ եւ հարկային մարմնին չներկայացնել հաշուետւութիւններ, սակայն կրնայ գրել հաշուարկային փաստաթուղթեր:

13.2.2. Ո՞վ է ինքնագբաղ անձը

Ինքնագբաղ անձ կրնայ ճանչցուիլ **ֆիզիքական անձ** ու **անհատ ձեռնարկատերեր** հանդիսացող անձը (ՀՀ քաղաքացի, օտարերկրացի կամ քաղաքացիութիւն չունեցող անձ)՝ պայմանով, որ.

- բացառապէս կ'իրականացնէ օրէնքով նախատեսուած գործունեութեան տեսակներեն որեւէ մէկը (տես՝ ստորեւ).
- անհկա կ'իրականացնէ Հայաստանի Հանրապետութեան մէջ.
- անհկա կ'իրականացնէ ինքնուրոյնաբար (առանց աշխատող կամ ծառայութիւն մատուցող ներգրաւելու).
- անհկա կ'իրականացնէ մէկ մշտական վայրի միջոցով, բացառութեամբ գործունեութեան այն տեսակներուն, որոնք իրենց բնոյթով մշտական վայր չունին (օրինակ՝ յաճախորդներու տուններու մէջ ծառայութիւններու մատուցում).
- անոր տարեկան հասոյթը (չհաշուած գործատուէն ստացած աշխատավարձը) նախորդ օրացուցային տարուան ընթացքին չի գերազանցեր 9 միլիոն դրամը.
- ան չի հանդիսանար համատեղ գործունեութեան պայմանագրի կողմ:

13.2.3. Գործունեության ո՞ր տեսակներու համար է սահմանուած հարկային արտօնութիւն

Արտօնութիւնը կը տարածուի բնակչութեան պատուերով կատարուող գործունեութեան հետեւեալ տեսակներուն վրայ՝

- կօշիկի եւ կաշուէ գալանտերիայի եւ համանման այլ արտադրատեսակներու արտադրութիւն, կօշիկի եւ կաշուէ գալանտերիայի պարագաներու արտադրութիւն, կօշիկի եւ կաշուէ արտադրատեսակներու նորոգում.
- հագուստի, գլխարկներու, գորգերու եւ գորգագործական արտադրատեսակներու, ոչ թանկարժէք զարդերու արտադրութիւն ու նորոգում.
- փայտեայ իրերու պատրաստում, կահոյքի եւ տան կահաւորումի նորոգում.
- համակարգչային ու կենցաղային գործիքներու նորոգում, ծրագրային սպասարկում.
- հեծանիւներու եւ հաշմանդամներու սայլակներու արտադրութիւն, անձնական օգտագործման եւ կենցաղային այլ արտադրատեսակներու նորոգում.
- տնտեսական եւ գեղագարդ խեցեգործական արտադրատեսակներու, այլ ճենապակէ եւ խեցեգործական արտադրատեսակներու արտադրութիւն, թիթեղագործական գործունեութիւն.
- ժամացոյցներու, ժամանակաչափ սարքերու նորոգում, երաժշտական գործիքներու նորոգում.
- մասնաւոր տնային տնտեսութիւններէն ներս ծառայութիւններու մատուցում.
- նեղ մասնագիտական գիտելիքներու ձեռքբերման այլ դասընթացներ, լեզուներու ուսուցման, բարձրագոյն եւ այլ հաստատութիւններ ընդունուելու համար նախապատրաստական դասընթացներ.
- պարերու, երգեցողութեան դասաւանդում.
- կատարողական արուեստի բնագաւառէն ներս գործունեութիւն, կատարողական արուեստի բնագաւառէն ներս օժանդակ գործունեութիւն.
- ստեղծագործական գործունեութիւն, խրախճանքներ վարելու գործունեութիւն.
- կրթական գործունեութիւն եւ արտադպրոցական դաստիարակութիւն մարմնամարզութեան բնագաւառէն ներս.
- դարբնոցային գործունեութիւն.
- զբօսաշրջային տուներու միջոցով հիւրանոցային ծառայութիւններու մատուցում:

13.2.4. Ինչպե՞ս ստանալ հարկային արտօնութիւն

Արտօնութիւն ստանալու համար հաշուառման վայրի հարկային մարմին պետք է ներկայացնել՝

- դիմում (ծելը կը տրամադրեն հարկային մարմինները),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ կացութեան քարտ կամ փախստականի համաձայնեցուած ճամբորդական փաստաթուղթ) եւ ամոր պատճենը,
- անհատ ձեռնարկատիրոջ պարագային՝ նաեւ գրանցման վկայականն ու անոր պատճենը:

Չարկերէն ազատ ըլլալու արտօնագիր կը տրամադրուի դիմումի օրուան յաջորդող մէկ աշխատանքային օրուան ընթացքին:

13.2.5. Ի՞նչ է պետք յիշել դիմումը լրացնելու ժամանակ

Դիմումը լրացնելու ժամանակ պետք է ճիշտ նշել՝

- գործունեութիւնը իրականացնելու ճշգրիտ ժամանակահատուածը: Արտօնութիւնը կը սկսի գործել դիմումի ներկայացման ամիսէն սկսեալ **մինչեւ դիմումին մէջ նշուած ժամանակահատուածի աւարտը:**
- գործունեութեան այն տեսակը կամ տեսակները, զոր (զորս) անձը կ'իրականացնէ կամ պիտի իրականացնէ: Դիմումին մէջ նշուած գործունեութեան համար **արտօնութիւնը չի գործեր:**
- գործունեութեան իրականացման վայրը (հասցէն), բացառութեամբ գործունեութեան այն տեսակներուն, որոնք իրենց բնոյթով չունին իրականացման մշտական վայր:



14. Մաքսային արտոնութիւններ

14.1. ՀՀ մշտական բնակութեան ժամանոյ ֆիզիքական անձերու անձնական գոյքի ներմուծում

14.1.1. Ի՞նչ արտոնութիւն կը տրամադրուի

Եթէ անձը Հայաստան ժամանած է մշտական բնակութեան, ապա որոշ պայմաններու միաժամանակեայ պահպանման պարագային կրնայ ներմուծել իր որոշակի անձնական գոյքը առանց մաքսատուրք եւ աւելցուած արժեքի հարկ վճարելու:

Արտոնութիւնը կը տրամադրուի հետեւեալ գոյքի համար՝

- անձնական գործածութեան օգտագործուած իրեր (հագուստ եւ այլն),
- անձնական օգտագործման մէկ ինքնաշարժ,
- տնային օգտագործուած գոյքը (կահոյք, կենցաղային սարքեր եւ այլն):

Մեքենայի համար արտոնութիւնը կը գործէ, եթէ մեքենան վերջին անգամ հաշուառումէն հանելէն առաջ հաշուառուած եղած է այն երկրի մէջ, ուր անձը մշտապէս բնակած է մինչեւ ՀՀ գալը: Սա կը նշանակէ, որ մինչ Հայաստան գալը Լիբանանի մէջ մշտական բնակութիւն (օրացուցային տարուան 184 օր կամ աւելի) հաստատած սուրիահայերը չեն կրնար օգտուիլ այդ արտոնութենէն Սուրիոյ մէջ հաշուառուած իրենց մեքենայի համար:

Բոլոր պարագաներուն արտոնութենէն հնարաւոր է օգտուիլ, եթէ ՀՀ մշտական բնակութեան ժամանելու պահէն անցած է ոչ աւելի, քան 18 ամիս եւ դիմող անձը նախապէս նոյն արտոնութենէն դեռ չէ օգտուած:

14.1.2. Ո՞վ կ'օգտուի արտոնութենէն

Նշուած արտոնութենէն նոյն անձը կրնայ օգտուիլ 5 տարուան ընթացքին մէկ անգամ: Բացի Սուրիոյ քաղաքացիական պատերազմի հետեւանքով Հայաստան բնակութեան ժամանած անձերէն, այլ անձեր այս արտոնութենէն կ'օգտուին միայն այն պարագային, եթէ վերջին հինգ տարուան ընթացքին բնակած են Հայաստանէն դուրս:

14.1.3. Ինչպե՞ս օգտուիլ արտօնութենէն

ՀՀ ժամանելէն ետք 18 ամսուան ընթացքին անձը մաքսային մարմին կը ներկայացնէ դիմում՝ նշելով տեղափոխուող ապրանքներու անուանումները, կշիռքը եւ քանակը եւ կցելով՝

- ՀՀ քաղաքացիի անձնագիրի պատճենը կամ նոյնականացման քարտի կամ կացութեան քարտի կամ փախստականի համաձայնեցուած ճամբորդական փաստաթուղթի պատճենը.
- այն անձնագրի կամ նման փաստաթուղթի պատճենը, որ կը հաստատէ օտարերկրեայ պետութեան մէջ մշտական բնակութեան փաստը (օտարերկրեայ անձնագրի կամ կացութեան քարտի պատճենը կամ օտարերկրեայ պետութեան տրամադրած մշտական բնակութեան փաստի վերաբերեալ այլ փաստաթուղթ՝ միջազգային վաւերացմամբ կամ օտարերկրեայ պետութեան մէջ ՀՀ հիւպատոսութեան վաւերացմամբ.
- օտարերկրեայ պետութեան լիազօր մարմնի տրամադրած՝ ինքնաշարժի եւ (կամ) կցորդի սեփականութեան փաստը հաւաստող փաստաթուղթի պատճենը.
- անձնական մեքենայի ներմուծման պարագային՝ անոր հաշուառման/գրանցման վկայականը.
- փոխադրամիջոցային փաստաթուղթերը, անձնական իրերու արժեքը հաւաստող փաստաթուղթերը եւ այլն:

Բոլոր օտարալեզու փաստաթուղթերը պէտք է ներկայացուին անոնց վաւերացուած հայերէն թարգմանութեամբ:

14.2. Այլ մաքսային արտօնութիւններ

Մաքսային օրէնսդրութեամբ նախատեսուած են նաեւ հետեւեալ արտօնութիւնները՝

- Գերակայ ոլորտէն ներս իրականացուող ներդրումային ծրագրի ծիրէն ներս բացառապէս Հայաստանի տարածքի մէջ օգտագործելու համար նախատեսուած գիտարուեստական սարքաւորումներու, անոնց բաղկացուցիչ ու համալրող մասերու, հումքի եւ նիւթերու ներմուծումը ազատ է օրէնսդրութեամբ սահմանուած կարգով մաքսային մարմիններու կողմէն հաշուարկուած մաքսատուրքէն, եթէ այդպիսի գիտարուեստական սարքաւորումները, անոնց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը եւ նիւթերը չեն արտադրուիր Եւրասիական տնտեսական միութեան անդամ երկրներու մէջ (կամ կը արտադրուին ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բաւարար քանակով) կամ չեն համապատասխանիր ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներուն.

- կանոնադրական ունեցուածքի համալրմանն ուղղուած՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներէն ապրանքներու ներմուծումը ազատ է մաքսատուրքէն, եթէ անոնք ԵԱՏՄ տարածքէն ներմուծել հնարաւոր չէ:

15. Սնանկութիւնն ու անոր առանձնայատկութիւնները

15.1. Ո՞վ կրնայ ճանչցուիլ սնանկ եւ որո՞նք կողմէն

Սնանկ կրնայ ճանչցուիլ ինչպէս իրաւաբանական անձը, այնպէս ալ ֆիզիկական անձը՝ դատարանի կողմէն:

15.2. Որո՞նք են սնանկութեան տեսակները

Սնանկութիւնը կրնայ ըլլալ հարկադրուած, կամաւոր, կանխատեսուող եւ կանխամտածուած:

15.2.1. Ո՞ր սնանկութիւնն է հարկադրուած

Անձը (պարտապանը) կարելի է սնանկ ճանչնալ, եթէ ան՝

- ունի առնուազն 1 միլիոն ՀՀ դրամի չմարած պարտք.
- կ'ընդունի այդ պարտքը, կամ պարտքը հաստատուած է գրաւոր գործարքով, դատարանի որոշմամբ կամ կը վերաբերի հարկեր, տուրքեր կամ այլ պարտադիր վճարներ վճարելու պարտաւորութեան.
- պարտաւորութեան հաշուանցում հնարաւոր չէ, եւ
- պարտաւորութիւնը ժամկետանց է աւելի քան 60 օր:

15.2.2. Ո՞ր սնանկութիւնն է կամաւոր

Պարտապանը կրնայ սեփական նախաձեռնութեամբ դիմել սնանկ ճանչցուելու համար, եթէ՝

- իր պարտաւորութիւնները առնուազն մէկ միլիոն ՀՀ դրամով կը գերազանցեն իր ակտիւներու արժէքը **կամ**
- հարկերու, տուրքերու, պարտադիր վճարներու կամ այլ նման պարտաւորութիւններու չափը կը գերազանցէ իր ակտիւներու արժէքը:

15.2.3. Ո՞ր սնանկութիւնն է կանխատեսուող

Պարտապանը իրաւունք ունի դիմելու կանխատեսուող սնանկութեան այն պարագային, երբ ակնյայտ է, որ ապագային պիտի յառաջանան կամաւոր սնանկութեան հիմքեր:

15.2.4. Ո՞ր սնանկությունն է կանխամտածուած

Սնանկությունը կը համարուի կանխամտածուած, եթէ անիկա յառաջացած է պարտապանի վերահսկող անձերու (տնօրէն, խոշոր բաժնետէր եւ այլն) կամ անհատ ձեռնարկատիրոջ մեղքով: Նման արարքը քրեօրէն պատժելի է, եթէ պարտապանին կամ պարտատէրերուն պատճառուած է խոշոր վնաս: Բացի այդ, կանխամտածուած սնանկութեան համար մեղաւոր անձինք պարտատէրերու առջեւ կը կրեն պատասխանատուութիւն իրենց գոյքով, եթէ պարտապանի (իրաւաբանական անձի) գոյքը չբաւարարէ պարտատէրերու դէմ պարտաւորութիւնները մարելու համար: Խոշոր վնաս պատճառող կանխամտածուած սնանկությունը յանցագործութիւն է:

15.3. Ե՞րբ կը ներկայացուին պարտատէրերու պահանջները

Պարտատէրերը իրենց պահանջները պէտք է ներկայացնեն դատարան սնանկութեան մասին յայտարարութենէն ետք՝ մեկամսեայ ժամկէտի ընթացքին: Սնանկութեան վերաբերեալ բոլոր յայտարարութիւնները կը տեղադրուին www.azdarar.am կայքի մէջ:

Խորհուրդ կը տրուի պարբերաբար ստուգել այդ կայքը՝ որպէս պարտատէր գրանցուելու հնարաւորութիւնը չըրջանցելու համար: Պէտք է իմանալ, որ ժամանակին պահանջ ներկայացնելը կարելոր է ոչ միայն սնանկութեան գործընթացէն դուրս չմնալու, այլեւ առաւել բարձր հերթի պահանջ գրանցելու համար: Բացի այդ, ժամանակին քայլեր ձեռնարկելը զերծ կը պահէ աւելորդ քաշքշուկներէն, քանի որ այլապէս չյարգուած ժամկէտը կրնայ վերականգնուիլ միայն դատական կարգով:

15.4. Ի՞նչ հերթականութեամբ կը բաւարարուին պարտատէրերու պահանջները

Պարտատէրերու պահանջները կը բաւարարուին հետեւեալ հերթականութեամբ՝

- գրաւով, երաշխիքով կամ երաշխաւորութեամբ ապահովուած պահանջներ.
- կառավարիչի վարձատրութիւն եւ վարչական ծախսեր.
- քաղաքացիներու կեանքին կամ առողջութեան վնաս պատճառելու համար, ինչպէս.
- աշխատանքային պայմանագրերէն բխող պահանջներ.
- դատական ծախսեր.

- պարտապանը սևանկ ճանչնալու մասին դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելէն ետք պարտապանի գոյքի օտարման հետ կապուած ընթացիկ անուղղակի հարկային պարտաւորութիւններ.
- չապահովուած պահանջներ, որոնք յառաջացած են պարտապանը սևանկ ճանչնալու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահէն.
- չապահովուած պարտատէրերու պահանջներ, ներառեալ՝ հարկային եւ նման այլ պարտքեր.
- ստորադաս չապահովուած պարտատէրերու պահանջներ.
- պարտապանի հիմնադիրներու պահանջներ:

15.5. Որո՞նք են սևանկ ճանչցուելու հետեւանքները

Սևանկութեան գործը կրնայ ունենալ երկու հնարաւոր զարգացում՝

1. իրաւաբանական անձի լուծարում, իսկ անհատ ձեռնարկատիրոջ պարագային՝ գործունեութեան դադրեցման պետական գրանցում.
2. պարտապանի ֆինանսական առողջացում, որուն պարագային սևանկ ճանչցուածները ֆինանսապէս կ'առողջանան եւ կրնան շարունակել իրենց գործունեութիւնը: Պէտք է յիշել, որ առողջացած անձը կ'ազատի բոլոր այն պարտաւորութիւններէն, որոնցմէ բխող պահանջները չեն ներկայացուած սևանկութեան աւարտած գործի ծիրէն ներս, բացառութեամբ օրէնքով սահմանուած որոշ դէպքերու:

Եւ՛ առաջին, եւ՛ երկրորդ պարագային սևանկ ճանչցուած իրաւաբանական անձը կամ անհատ ձեռնարկատէրը չ'ազատիր՝

- պարտաւորութիւններէն, որոնցմէ բխող պահանջները չեն ներկայացուած սևանկութեան աւարտած գործի ծիրէն ներս, եթէ սևանկութեան գործը աւարտած է սևանկ ճանչնալու մասին վճիռը օրինական ուժի մեջ մտնելէն ետք՝ վեց ամսուայ ընթացքին,
- պարտավճարներու վճարումէն,
- սևանկ ճանչնալու պահուն նախորդած մէկ տարուան ընթացքին հարկային մարմիններէն քօղարկած պարտաւորութիւններու վճարումներէն,
- կեանքին եւ առողջութեան պատճառուած վնասներէն յառաջացող պարտաւորութիւններէն,
- յանցագործութեամբ պատճառուած վնասի հատուցման պարտաւորութիւններէն:

15.6. Որքա՞ն է սնանկութեան գործերով վարոյթներու ժամկետը

Օրէնքով սնանկութեան գործընթացի ընդհանուր կամ առաւելագոյն ժամկետ չէ սահմանուած, սակայն անկկա չի կրնար անհիմն ձգձգուիլ: Այդ իսկ պատճառով սնանկութեան գործերով կառավարիչներուն համար սահմանուած է յաւելեալ պարտաւորութիւն՝ իրականացնելու սնանկութեան գործընթացին իրենց վերապահուած լիազօրութիւնները հնարաւորիսս սեղմ ժամկետներու մէջ:

16. Ֆինանսական ծառայութիւններու հասանելիութիւնը

Սուրիահայերը, ներառեալ կացութեան կարգավիճակ ունեցողներն ու փախստականները, Յայաստանի մէջ կրնան օգտուիլ ամբարտայիս դրամատուներու կողմէն առաջարկուող բոլոր ծառայութիւններէն: Այնուամենայնիւ, գործնականօրէն որոշ ծառայութիւններէն օգտուիլը (ինչպէս օրինակ՝ հիփոթեթով վարկերու ձեռքբերում կամ պարզապէս վարկերու ձեռքբերում) կը պահանջէ որոշակի ապահովութեան (գոյքի գրաւ, երաշխաւորութիւն կամ երաշխիք), որ յաճախ հնարաւոր չ'ըլլար ապահովել՝ հաշուի ամենելով, որ Յայաստանի մէջ սուրիահայերը որպէս կանոն չունին գոյք, զոր կարելի է գրաւ դնել, իսկ երաշխաւորութիւն ունէ մէկը չի համաձայնիր տրամադրել: Երաշխիքն ալ կը տրամադրուի դրամատան, վարկային կազմակերպութեան կամ ապահովագրական ընկերութեան կողմէն: Վերջիններս չեն կրնար տրամադրել երաշխիք, երբ իրենք իսկ պիտի հանդիսանան պարտատէր՝ վարկ տրամադրելով սուրիահայերուն:

Ինչ կը վերաբերի միւս դրամատնային ծառայութիւններուն, պէտք է նշել, որ սուրիահայերու համար որեւէ խոչընդոտ չկայ հայաստանեան դրամատուներու մէջ բանալ դրամատնային հաշիւներ եւ ներդնել աւանդներ:

Հիմնական դրամատնային ծառայութիւնները հասանելի են ինչպէս անձնագրի, կացութեան քարտի, այնպէս ալ փախստականի անձնագրի տրամադրման պարագային: Փախստականի անձնագրի պարագային անհրաժեշտ է ներկայացնել հանրային ծառայութեան համարանիշ եւ ՀՀ-ի մէջ հաշուառում:

Ֆինանսական ծառայութիւններու մասին առաւել մանրամասն տեղեկատուութիւն սուրիահայերու համար հասանելի է «Ֆինանսներ բոլորի համար» abcfinance.am կայքի մէջ:

ՆՇՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ